«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2020

ՆԱԽԱԲԱՆ

Հայկական Բժշկական Ինստիտուտի (այսուհետ՝ ՀԲԻ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ՀԲԻ-ի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, տեղացի և միջազգային փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն զեկույցը պարունակում է ՀԲԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

Բովանդակություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4
ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 11
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ 14
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 19
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 19
I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 22
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 24
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 29
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 35
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 41
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 45
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 50
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 55
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 57
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 60
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 65
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 66
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 66
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 68
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 70
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 73
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 74
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 75

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԲԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ՀԲԻ-ն բժշկական ուղղվածություն ունեցող մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունը ուսանողներին որակյալ տեսական գիտելիքներ, գործնական հմտություններ և մասնագիտական կոմպետենցիաներ տրամադրելու միջոցով նրանց մեջ կլինիկական մտածողության ձևավորումն է: Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ ՀԲԻ-ն ներկայում գտնվում է բարեփոխումների փուլում և դեռևս նոր են ձևավորվում ՀԲԻ տարբեր ոլորտներում պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում ցիկլի ներդրման հիմքերը: ՀԲԻ-ում ռազմավարական պլանավորում դեռևս բոլոր մակարդակներում չի իրականացվում: Կառավարման համակարգում որոշումների կայացումը հիմնված չէ տվյալների հիման վրա, սահմանված չէ ինչ տվյալներ բուհը պետք է ստանա տարբեր գործընթացներից, որպեսզի որոշումներն ուղղված լինեն տարբեր գործընթացների արդյունավետության բարձրացմանը և որակի շարունակական զարգացմանը: ՀԲԻ-ում իրականացնում են պրակտիկ դասընթացներ, սակայն տարբեր ցիկլերի վերահսկողություն չի իրականացվում, ինչպես նաև առկա չեն սահմանված սիմուլիացիաների քանակ, որը կնպաստի ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների արդյունավետ գնահատմանը: Հարկ է նշել, որ ուսանողների գնահատումը առավել շեշտադրում է տեսական գիտելիքները: Ուսանողների մոտ վերլուծական կարողությունների ձևավորման նպաստող հանձնարարականները սակավաթիվ են, բացակայում են կիրառական հետազոտությունները, ուսանողները չեն կիրառում տվյալներ տարբեր վերլուծությունների համար:

Շահակիցների տարբեր խմբերի շրջանում ՀԲԻ-ն դիրքավորված է՝ որպես առավելապես գործնական ուսուցում ապահովող հաստատություն: Նման միասնական ընկալումն ու ՀԲԻ-ի շուրջ սպասումները լավ հիմք են ռազմավարական զարգացման առաջնահերթությունների և նպատակների հստակ սահմանման համար, սակայն

նպատակների սահմանման և իրականացման գործընթացում ՀԲԻ-ն դեռևս չի կիրառում ռազմավարական մոտեցում:

ՀԲԻ կառավարման համակարգում էական է հիմնադիրների դերակատարումը: Կառավարման մարմինների միջև լիազորությունների բաշխումը պայմանական է: Ըստ էության, կառավարման համակարգի ազդեցությունը ՀԲԻ բոլոր գործընթացների վրա դեռևս էապես չի նպաստում արդյունավետությանը:

ՀԲԻ մասնագիտությունների կրթական ծրագրերը ֆորմալ առումով ներառում են գրեթե բոլոր անհրաժեշտ բաղադրիչները, առկա են նաև ծրագրերին առնչվող գրեթե բոլոր գործընթացների վերաբերյալ փաստաթղթեր, սակայն թե՛ ծրագրերի կառուցվածքում, թե՛ իրականացման գործընթացում նկատելի են թերացումներ: Մասնավորապես՝ առկա են խզումներ ծրարգրերի տարբեր բաղադրիչների միջև, իսկ ծրագրերի պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման միասնական մոտեցումն ու կարգավորումները վերջին հաշվով բացակայում են:

Ուսանողներին ընդհանուր առմամբ տրամադրվում է լրացուցիչ աջակցություն դասախոսական և վարչական կազմերի կողմից, սակայն այդ գործընթացները դեռևս կանոնակարգված չեն: Հստակ դիրքավորման շնորհիվ ՀԲԻ-ն կարողանում է ապահովել դիմորդների կայուն հոսք:

ՀԲԻ պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում բաղկացած է գործող բժիշկներից, ինչն էական դրական ազդեցություն է ունենում մատուցվող կրթական ծառայությունների որակի վրա: Այդուհանդերձ, դեռևս ձևավորված չէ մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգը: Այս ոլորտը կարգավորող փաստաթղթերը հիմնականում չեն պարունակում գործնականում անշեղորեն կիրառվող դրույթներ:

ՀԲԻ-ի հետազոտական հավակնությունները դեռևս հստակեցված չեն: Սահմանափակ ռեսուրսների պայմաններում դեռևս կասկածի տակ է հետազոտական գործունեություն ծավալելու նպատակահարմարությունը: Այդուհանդերձ, հաշվի առնելով բժշկական մասնագիտությունների առանձահատկությունները՝ ՀԲԻ-ում կան հետազոտական գործունեության անհրաժեշտության վերաբերյալ համոզմունքի ձևավորման միտումներ: ՀԲԻ-ում բացակայում են կիրառական հետազոտությունները:

Ուսումնական միջավայրի և հասանելի ռեսուրսների համար կարևորագույն գործոնը կլինիկաների հետ համագործակցությունն է, ինչի արդյունքում հիվանդանոցային իրական միջավայրն ունենում է ամենօրյա հասանելիություն ուսումնառողների համար: Ինչ վերաբերում է ֆինանսական կառավարմանը, առկա են եկամուտի մեկ աղբյուրից

կախվածության, ինչպես նաև նպատակների և ֆինանսական հատկացումների խզման վտանգներ:

Տրամադրվող կրթության, իրականացվող հետազոտության և ռեսուրսների օգտագործման համար հասարակությանը հաշվետվողականության կայուն մեխանիզմներ ՀԲԻ-ն դեռևս չի ձևավորել: Ներքին հաշվետվողական որոշ տարրերը բավարար չեն, որպեսզի ձևավորվի արտաքին հաշվետվողականություն: Չնայած դիրքավորման ընձեռած հնարավորություններին՝ ՀԲԻ-ն դեռևս խիստ պասիվ է հասարակական պատասխանատվության գործողություններում:

Արտաքին հարաբերություններում ՀԲԻ համար օբյեկտիվորեն առաջնահերթ է տեղական կլինիկական կազմակերպությունների հետ կապերի ձևավորումը, ինչն արդյունավետորեն իրականացվում է: Միջազգայնացումը դեռևս ամրացած չէ՝ որպես գործունեության չափողականություն, սակայն ակնառու են ՀԲԻ առաջին զգալի քայլերն այդ ուղղությամբ, մասնավորապես՝ օտարերկրյա ուսանողների հյուրընկալումը: Հաշվի առնելով միջազգայնացման նաև ֆինանսական օգուտները՝ ՀԲԻ-ն արդեն նախատեսում է զարգացնել այդ ուղղությունը:

ՈԱ ներքին համակարգը դեռևս չի կարելի համարել կայացած, սակայն նկատելի է դրա գործունեության ազդեցության ընդլայնումը: Միևնույն ժամանակ վերջինս ենթադրում է նաև գործիքակազմի ընդլայնում, ինչպես նաև մի շարք նոր ընթացակարգերի մշակում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Ձևավորված և կայուն առաքելությունն ու դիրքավորումը
2) Դիմորդների կայուն հոսքը
3) Ուսանողների համար լրացուցիչ պարապմունքների հնարավորությունները, այդ թվում՝ կլինիկական պայմաններում
4) Պրոֆեսորադասախոսական կազմի պրակտիկ փորձը
5) Կլինիկաների ուսումնական միջավայրը, սարքավորումների և հիվանդների հետ աշխատելու հնարավորությունը
6) ՀԲԻ-ի սերտ և կայուն համագործակցությունը տեղական կլինիկական կազմակերպությունների հետ
7) Որակի ապահովման ենթահամակարգի աճող ազդեցությունը

Հաստատության թույլ կողմերն են.

1) Հեռանկարային զարգացման վերաբերյալ միասնական տեսլականի ձևավորված չլինելը
2) Կառավարման մարմինների միջև իշխանության բաշխված չլինելը և կառավարման համակարգի օղակների միջև աշխատանքի բաժանման ոչ հստակ լինելը
3) Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության, տեղեկատվության կառավարման մոտեցումների ձևավորված չլինելը
4) Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականության և ուղենիշների պակասը
5) Կրթական ծրագրերի իրականացման նկատմամբ վերահսկողության պակասը
6) Հետազոտական ուղղություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարության, ինչպես նաև երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի պակասը
7) Հետազոտական գործունեության խթանման մեխանիզմների պակասը
8) Եկամուտների դիվերսիֆիկացվածության պակասը
9) Արտաքին հաշվետվողական կարգի, ինչպես նաև գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության ապահովման քաղաքականության բացակայությունը

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) Համապատասխանեցնելով ՀԲԻ հիմնարար փաստաթղթերը ձևավորված իրական առաքելությունը՝ այն ուղենիշ դարձնել նպատակների սահմանման և ամբողջ ինստիտուտի գործունեության համար:
2) Արտաքին և ներքին շահակիցների ներգրավմամբ մշակել ՀԲԻ հեռանկարային զարգացման վերաբերյալ միասնական տեսլական:
3) Նպատակներին զուգահեռ սահմանել դրանց իրականացումը բնութագրող ցուցիչների արժեքներ:

Կառավարումն ու վարչարարությունը

4) Կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացման նպատակով հստակեցնել կառավարման կանոնադրական մարմինների, կառավարման համակարգի այլ օղակների և ստորաբաժանումների դերը, պարտականություններն ու լիազորությունները՝ նպաստելով դրանցում

ընդգրկված մարդկային ռեսուրսների մասնագիտական կարողությունների ազդեցությանը կայացվող որոշումների որակի վրա:

5) Ապահովել սահմանված ռազմավարական նպատակներից ամենօրյա գործողությունների բխեցումը՝ ձևավորելով փոխկապակցված տարաժամկետ պլանների աստիճանակարգ:
6) Մշակել տեղեկությունների կառավարման համակարգ՝ հստակեցնելով ներգնա և արտագնա անհրաժեշտ տեղեկատվության շրջանակը, ինչպես նաև ներդնելով տեղեկատվական հոսքերի արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
7) Գործընթացների արդյունավետ կարգավորման համար սահմանել հստակ, իրավական առումով ճշգրտված ընթացակարգեր, որոնք որպես գործընթացների կազմակերպման ուղենիշ կծառայեն:

Մասնագիտության կրթական ծրագրերը

8) Վերանայել ՄԿԾ-երի վերջնարդյունքները, հատուկ ուշադրություն դարձնելով դրանց իրատեսականությանը, չափելիությանը և կրթական մակարդակին համապատասխանությանը:
9) Ներդնել առարկայական ծրագրերի մշակման ընթացակարգ՝ ապահովելով դրանց և կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանությունը:
10) Մշակել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականության և ուղենիշներ՝ առանձնակի կարևորելով գնահատման չափորոշիչները:
11) Պրակտիկ կրթություն ապահովելու նպատակով՝հստակ սահմանել սիմուլիացիոների քանակ վերջնարդյունքների ձևավորման համար, ինպես նաև ներդնել ուսանողի պորտֆոլիոն որպես գնահատման գործիք:
12) Կրթական ծրագրերում ներդնել միջազգային շարժունությանը նպաստող տարրեր:
13) Հաշվի առնելով կլինիկական ուսուցման առանձնահատկությունները՝ ներդնել ՄԿԾ-ների իրականացման նկատմամբ մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործուն և բարելավմանը միտված մեխանիզմներ:

Ուսանողները

14) Ստեղծել համապատասխան ընթացակարգ, որը կառնչվի միջազգային ուսանողների ընդունելությանը, ինչպես նաև համակարգել միջազգային ուսանողների հավաքագրման գործընթացները:
15) Ապահովել ուսանողների ակտիվ ներգրավվածությունը կիրառական հետազոտություններում:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16) Հստակեցնել ՊԴԿ նկատմամբ պահանջներն ըստ առանձին կրթական ծրագրերի:
17) Կարգավորել պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմի վերապատրաստումների գործընթացը՝ հիմք ընդունելով կարիքների գնահատումը:
18) Ներդնել սկսնակ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման և խրախուսման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հետազոտությունը և զարգացումը

19) Հստակեցնել գիտահետազոտական հետաքրքրությունների շրջանակն ու հավակնությունները:
20) Ապահովել բարենպաստ պայմաններ կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ավելացման և իրականացման համար, մասնավորապես՝ գիտազոտական լաբորատորիաների հագեցմամբ կամ ստեղծմամբ:
21) Մշակել Գիտահետազոտական աշխատանքների իրականացման խթանման մեխանիզմներ (օրինակ՝ ներքին դրամաշնորհների տրամադրում):
22) Բարելավել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները՝ նպաստելով առավել գիտագործնական բնույթի ուսումնառությանը:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

23) Նպատակադրել եկամուտների դիվերսիֆիկացման կայուն դրական միտումներ և մշակել դրա իրականացմանն ուղղված քայլեր:
24) Մշակել փաստաթղթաշրջանառության թվայնացմանն ուղղված քայլեր:
25) Կրթական ծրագրերի նպատակների արդյունավետ իրականացման համար՝ ապահովել լաբորատոր հագեցվածությունը:

Հասարակական պատասխանատվությունը

26) Մշակել և ներդնել արտաքին հաշվետվողություն, ընթացակարգերի հասանելիություն, գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկությունների թափանցիկություն ապահովող մեխանիզմներ՝ ի նպաստ հասարակության շրջանում ՀԲԻ ճանաչվածության աճին:
27) Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող գործընթացներում բարձրացնել ՀԲԻ նախաձեռնողականությունը՝ ներդնելով հետադարձ կապի խթանման գործիքակազմ, ինչպես նաև հասարակությանը գիտելիքի և արժեքների (օրինակ՝ առողջ ապրելակերպի) կայուն փոխանցում ապահովող մեխանիզմներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

28) Հստակեցնելով ՀԲԻ միջազգայնացման երկարաժամկետ նպատակները՝ մշակել միջազգային համագործակցության խթանման գործիքակազմ, սահմանել դրա կիրառման պատասխանատուներ:
29) Հետևողական լինել ստորագրված հուշագրերի իրականացմանը:
30) Ներդնել ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացությունն ապահովող մեխանիզմներ՝ հաշվի առնելով ՀԲԻ միջազգայնացման կարիքները և թիրախները:

Որակի ներքին ապահովման համակարգը

31) Համակարգել ՈԱ փաստաթղթերը՝ ապահովելով դրանցում ներառված ընթացակարգերի գործադրման երաշխիքներ:
32) Ներդնել ՈԱ ներքին համակարգի արդյունավետության և կարիքների գնահատման կայուն մեխանիզմներ և ապահովել բացահայտված կարիքներին համատապասխան անհրաժեշտ վերազինում և վերապատրաստում:
33) Ներդնել որակի ապահովման կենտրոնի կողմից տեղեկությունների ստացման և փոխանցման մեխանիզմներ՝ ապահովելով ՈԱ ներքին համակարգի հաշվետվողականություն:
34) Մշակել ՈԱ գործընթացներին տարիների փորձ ունեցող դասավանդողների ներգրավման մեխանիզմներ:
35) Հստակեցնել ՈԱԿ կողմից տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը՝ օգտագործելով նաև քանակական ցուցիչներ, և ապահովել գնահատման արդյունքների թափանցիկությունը:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Արտաքին կապերը և միջազգայնացումը կարևոր դեր են խաղում բարձրագույն կրթության զարգացման գործում և էապես նպաստում են բարձրագույն կրթության ընդհանուր որակին: Սույն գնահատման համատեքստում մասնավորապես արծարծվում է ՀԲԻ-ի արտաքին կապերի և միջազգայնացման բաղադրիչը:

«Արտաքին կապերը» բարձրագույն կրթության ոլորտի համատեքստում ենթադրում են բոլոր այն գործողությունները, որոնք ներգործում և խթանում են հաստատության զբաղեցրած դիրքին իր արտաքին միջավայրում՝ թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում: Սա կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գործընկերությունն ու համագործակցությունը այլ պետական կամ մասնավոր հաստատությունների կամ մարմինների հետ, մասնակցությունը տարածաշրջանային և միջազգային կապերի ստեղծմանը, շրջանավարտների զարգացմանը միտված ծրագրերը, համայնքում գործող գործընկերությունը կամ մատուցվող ծառայությունները և այլն:

ՀԲԻ-ն բավականին ակտիվ գործունեություն է ծավալել արտաքին կապերի հաստատման գործում՝ մասնավորապես տեղական մակարդակում: 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ՀԲԻ-ն նշել է 21 համագործակցություն տարբեր հաստատությունների հետ՝ ներառյալ 9 ատամնաբուժական պոլիկլինիկա, 1 ռազմական հիվանդանոց, «Էրեբունի» բժշկական կենտրոնը, Առաջին օգնության գիտաբժշկական կենտրոնը, Հոգեբանական առողջության ինստիտուտը, Բժիշկների հայկական ասոցիացիան, Առողջապահության ազգային ինստիտուտը և այլն: Այս համագործակցությունների միջոցով, ՀԲԻ-ն էլ ավելի է նպաստում իր ծրագրերը և ուսանողներին՝ լայն հանրությանը ներկայացնելու խթանմանը: ՀԲԻ-ի թիրախը տեղական աշխատաշուկայի համար բժիշկներ պատրաստելն է, տեղական հաստատությունների և մարմինների այս ցանցը, որի մեջ ներգրավված են ՀԲԻ-ի շրջանավարտների հավանական գործատուներ, կարևոր և արժեքավոր միջոց է, որը աջակցում է ՀԲԻ-ին՝ իր ռազմավարական նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու համար:

ՀԲԻ-ն նաև ներդրել է մեխանիզմներ ուսանողներին արտաքին կապերի ոլորտում ներգրավելու համար: Շրջանավարտների ներկայացուցիչը համակարգում է շրջանավարտների ոլորտում իրականացվող տարբեր գործողություններ: Ուսանողական խորհուրդը ներգրավված է նաև արտալսարանային մի շարք համայնքային ծառայությունների մատուցման մեջ՝ դրանով իսկ նպաստելով ՀԲԻ-ի ինստիտուցիոնալ հեղինակությանը և ապահովելով ներգրավվածությունը արտաքին շահակիցների հետ:

Մինչ այժմ ՀԲԻ-ի արտաքին կապերի հաստատմանը և պահպանմանն ուղղված ջանքերն առավելապես հիմնված են տեղական/հայկական տարածաշրջանի վրա: Մինչ այժմ խիստ սահմանափակ քայլեր են ձեռնարկվել ինստիտուցիոնալ մակարդակով՝ Հայաստանի սահմաններից դուրս հաստատությունների հետ կապեր հաստատելու ուղղությամբ: Չնայած ՀԲԻ-ի տեսլականում, առաքելությունում ու նպատակներում նշվում է միջազգային հավակնությունը, միջազգայնացմանը որպես այդպիսին դեռևս կառուցվածքային և ռազմավարական ձևաչափով անդրադարձ չի կատարվել: Այնուամենայնիվ «Էրեբունի» ամսաթերթը հայտնում է, որ 2019 թվականի հոկտեմբերին ՀԲԻ-ն ստեղծել է միջազգային

համագործակցության և արտաքին կապերի հարցերով աշխատանքային խումբ՝ շեշտելով այդ հարթության կարևորությունը ՀԲԻ-ի ինստիտուցիոնալ զարգացման համար:

Միջազգայնացումը ավելի մեծ դեր կխաղա ՀԲԻ-ի ապագայում: Համալսարանի ղեկավարությունը վերջերս որոշում է կայացրել ռազմավարական քայլ կատարել միջազգային ուսանողներ ընդունելու և անգլալեզու ծրագրեր առաջարկելու վերաբերյալ՝ նպատակ ունենալով հավելյալ եկամուտ ստանալ և ավելացնել ինստիտուտի շահույթը: Սույն ծրագրերը վերջերս են մշակվել և ներառված չեն ինստիտուտի ինքնավերլուծությունում:

Պարզ չէ՝ արդյո՞ք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն արդեն իրավունք է շնորհել ՀԲԻ-ն անգլալեզու միջազգային կողմնորոշման ծրագրեր իրականացնել: Փորձագիտական այցի ընթացքում համապատասխան փաստաթղթեր չեն ներկայացվել: Այնուամենայնիվ այցի ժամանակ մի շարք հնդիկ ուսանողներ, ովքեր տեղափոխվել են մեկ այլ հայկական ուսումնական հաստատությունից, արդեն ընդունվել են ՀԲԻ՝ անգլալեզու ուսումնական ծրագրով սովորելու համար: Հաջորդ շաբաթների ընթացքում ակնկալվում էր թվով ավելի շատ օտարերկրյա/հնդիկ ուսանողներ ներգրավել: Այսպիսով՝ ՀԲԻ-ն, կարծես, ստեղծել է փաստեր՝ նախ և առաջ չհաստատելով ձևական և կառուցվածքային կարգավորումները:

ՀԲԻ-ի միջազգային հարթությունը հեշտացնելու և պահպանելու համար հիմնական կազմակերպչական ռազմավարությունները՝ ներառյալ քաղաքականությունը, ընթացակարգերը, համակարգերը և օժանդակ ենթակառուցվածքը, հստակ ձևակերպված կամ մշակված չեն: Ինչպիսի՞ն է միջազգայնացման ռազմավարությունը: Որո՞նք են ՀԲԻ-ի միջազգայնացման նպատակները: Եվ ինչպե՞ս են այս նպատակները ներդրվում ՀԲԻ-ի ուսումնական ծրագրերի, հետազոտությունների և հանրային ծառայության գործառույթներում: Զարգացման ռազմավարական պլանում (2016-2020) չի նշվում ո՛չ միջազգայնացումը, ո՛չ անգլալեզու ծրագրերի ստեղծումը, ո՛չ էլ օժանդակ ծառայությունների ստեղծումը՝ միտված միջազգային ուսանողների հավաքագրմանը: Միջազգային ուսանողների համար դիմումի ընթացակարգերի կամ ընդունման չափանիշների վերաբերյալ որևէ տեղեկատվություն հասանելի չի եղել փորձագիտական այցի պահին ո՛չ կայքում, ո՛չ էլ հաստատության ներսում: Դեռևս հասանելի չէ ոչ մի տեղեկատվություն նաև անգլալեզու ծրագրերի վերաբերյալ, ինչպիսին է մանրամասն մշակված ուսումնական ծրագիրը: Նմանատիպ պատկեր ունենալով՝ ամենևին պարզ չէ, թե ինչպես կարելի է ապահովել որակյալ կրթություն:

Օտարերկրյա ուսանողների ընդունելությունը և անգլալեզու ծրագրեր առաջարկելը առաջին և կարևոր քայլ է ՀԲԻ-ի միջազգայնացման առաջխաղացման գործում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է դա իրականացնել համակարգված և կառուցվածքային մոտեցմամբ: Գործընթացը բարելավելու նպատակով առաջարկվում են հետևյալ դրույթները.

- Առաջնայնորեն անհրաժեշտ է ձեռք բերել անգլալեզու ծրագրեր իրականացնելու թույլտվություն/արտոնություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և համապատասխան այլ մարմինների կողմից:
- Հաջորդիվ ՀԲԻ-ն անհրաժեշտ է ձևավորել հստակ ռազմավարություն, հստակ քաղաքականություն և ընթացակարգեր միջազգայնացման իրականացումն ու առաջխաղացումը ապահովելու համար:

- ՀԲԻ-ն անհրաժեշտ է ապահովել թափանցիկությունը և բարձրացնել տեսանելիությունը ուսման պահանջների (իրավասության չափորոշիչներ, հայտերի ընդունման գործընթաց և այլն) և միջազգային ուսանողների համար առաջարկվող բոլոր ծրագրերի վերաբերյալ՝ մարքեթինգային նյութեր մշակելով և համապատասխան տեղեկատվություն և փաստաթղթեր հրապարակելով ՀԲԻ-ի կայքում:
- Անհրաժեշտ է ստեղծել միջազգային ուսանողների աջակցման համապատասխան ծառայություններ:
- Վերջապես ոչ պակաս կարևոր առաջարկություն է ստեղծել Արտաքին կապերի վարչություն կամ ստորաբաժանում, որը կհամակարգի և կհամախմբի բոլոր ջանքերը, որոնք վերաբերում են արտաքին կապերին և միջազգայնացմանը: Քանի որ միջազգային ուսանողների ներգրավումը միջազգայնացման միայն մեկ կողմն է, հետագա զարգացումները կարող են ներառել ուսանողների և անձնակազմի փոխանակման ծրագրեր, ուսումնական ծրագրերի միջազգայնացում և տարածաշրջանային և միջազգային համագործակցության հաստատում:

Ամփոփելով՝ ՀԲԻ-ն բավականին հաջողել է հայաստանյան տարբեր կառույցների հետ արտաքին կապերի հաստատման գործում: Միջազգային բաղադրիչի հավասարաչափ կայացման և առաջխաղացման համար բոլորովին վերջերս նախաձեռնվել են առաջին քայլերը, սակայն անհրաժեշտ է ձևավորել հստակ ռազմավարություն և ավելի կառուցվածքային մոտեցում:

Ամսաթիվ՝ 09 մարտ, 2020

_____

Տիգրան Մնացականյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ

ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.[1]

1. **Տիգրան Մնացականյան՝** ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար
2. **Աննա Փոլադյան՝** ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու
3. **Արտեմ Գրիգորյան՝** ԵՊԲՀ ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի դոցենտ, բժշկական գիտությունների թեկնածու
4. **Փոլին Գրիս՝** Բժշկական գիտությունների դոկտոր, Հայդելբերգի համալսարան, Հանրային առողջապահության ինստիտուտ, Որակի ապահովման կառույցի պատասխանատու
5. **Վաչե Ղարիբյան՝** Հայ-ռուսական համալսարան, Ընդհանուր և դեղագործական քիմիայի ամբիոն, 4-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ Վարդուհի Գյուլազյանը:

Թարգմանությունը կատարել է ԵՊԼՀ Թարգմանության ամբիոնի դասախոս Վարդանուշ Բաղդասարյանը:

Փորձագիտական խմբի անդամները, թարգմանիչը, համակարգողը ստորագրել են գաղտնիության և շահերի բախման բացառման հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՀԲԻ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՀԲԻ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերենով և անգլերենով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՀԲԻ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ՀԲԻ ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև համակարգողն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ՀԲԻ-ի հետ:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ ՈԱԱԿ-ի վերապատրաստման պատասխանատուների կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններ, փորձագետի էթիկայի և վարքագծի կանոններ:
2. Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում պրակտիկայից վերցված օրինակների միջոցով:
3. Փորձագիտական այց դերային խաղերի միջոցով:
4. Փորձագիտական զեկույցի պատրաստում:

Վերապատրաստումների ընթացքում քննարկվել են որակի ապահովման չափանիշները և ոլորտի առանձնահատկությունները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ինստիտուտի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խումբը դիտարկել է գործնական պարապմունքներ և քննություններ: Այսպես, փորձագիտական խումբը այցելել է Երեբունի Բժշկական Կենտրոն, և իրականացվել են դասալսումներ ընդհանուր բժշկության ֆակուլտետի տրավմատոլոգիաի 6-րդ կուրսում, թոքաբանության 7-րդ կուրսում, ինչպես նաև կարդիոլոգիա առարկայի 5-րդ կուրսում:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Հիմնական խնդիրների և ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի առանձնացումից հետո փորձագիտական խումբը հստակեցրել է հանդիպումների ժամանակ քննարկվող խնդիրները: Պարբերաբար կրկնվող հանդիպումների ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ հարցադրումները, և կազմվել փորձագիտական խմբի նախնական այցի փաթեթը: Փաթեթը պարունակում էր հանդիպումների պլան-ժամանակացույցը, ուսումնասիրման և պարզաբանման ենթակա հարցերը՝ ըստ թիրախային խմբերի և այն լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ էր ուսումնասիրել փորձագիտական այցի ընթացքում: Համալսարանի կողմից ներկայացրած ցանկերից ընտրվել են դասախոսական և ուսանողական կազմերի ներկայացուցիչները, շրջանավարտները, գործատուները, որոնք պետք է մասնակցեին հանդիպումներին:

Նախնական այց

2019 թվականի դեկտեմբերի 3-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց ՀԲԻ: ՄՈՒՀ-ի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԲԻ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցերի ժամանակացույց

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2019թ. դեկտեմբերի 16-ից 18-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՀԲԻ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը, թարգմանիչը և արձանագրողը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ՀԲԻ ռեկտորի հետ հանդիպումներով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի ներկայացուցիչները և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել է գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք, որը ներառվել է զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 03.02.2020-ին:

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը ՀԲԻ-ն ուղարկել է ՈԱԱԿ 17.02.2020-ին: Ուսումնասիրելով փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը՝ բուհը չի ներկայացրել առարկություններ: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 07.03.2020:

_____

Վարդուհի Գյուլազյան, գործընթացի համակարգող

09 մարտի 2020 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. ՀԲԻ-ն հիմնադրվել է 1990 թվականին: Հանդիսանում է առաջին մասնավոր բժշկական բուհը հետխորհրդային տարածքում: Պետության կողմից հավատարմագրվել է 2001 թ-ին:

Հիմնադրման օրվանից ՀԲԻ-ը ձգտել է ձևավորել սեփական դասախոսական կազմ՝ հանրապետությունում բազմաթիվ բժշկական ուղղվածության գիտահետազոտական հաստատություններից հրավիրվեցին աշխատելու հեղինակավոր և վաստակաշատ գիտնականներ: ՀԲԻ-ն համագործակցության պայմանագրեր կնքեց այդ գիտահետազոտական հաստատությունների հետ, որոնց բազայի վրա կազմավորվեցին ինստիտուտի ամբիոնները: Գիտահետազոտական հիմնարկների լավագույն աշխատակիցներից ընտրվեց ՀԲԻ-ի դասախոսական կազմը: Այդ շարքին էին պատկանում համաճարակաբանության ինստիտուտը, ուր հիմնվեցին վիրուսաբանության, իմունաբանության, մանրէաբանության և պարազիտաբանության ամբիոնները: Յոլյանի անվան արյունաբանության ինստիտուտը, որի բազայի վրա ձևավորվեցին և հանրապետությունում առաջին անգամ բուհական համակարգում դասավանդվեցին կլինիկական իմունոլոգիա, հեմատոլոգիա և տրանսֆուզիոլոգիա առարկաները: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտը, ուր հիմնադրվեց և սկսվեց դասավանդվել մարդու նորմալ ֆիզիոլոգիա առարկան, ամբիոնը ղեկավարում էր փորձառու գիտնական ակադեմիկոս Հովհաննես Բակլավաջյանը: Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի բազայից ընտրվեց բժշկական քիմիայի և ֆարմակոլոգիայի թիմը: ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հենքի վրա ձևավորվեց կենսաքիմիայի ամբիոնը, հիմնադիր և ղեկավար ակադեմիկոս Կոնստանտին Ղարագյոզյան: Այս ձևով իրապես հնարավոր դարձավ ապահովել գիտության և կրթության կապը: Ուշադրություն էր դարձվում ուսանողների հետազոտական մտածողության ձևավորմանը և նրանցից շատերը դասերի ավարտից հետո մնում էին լաբորատորիաներում օգնելու իրենց դասախոս ասիստենտներին հետազոտական աշխատանքներում և պատահական չէր, որ առաջին իսկ ուսանողական գիտաժողովը շատ ներկայացուցչական եղավ:

Կրթություն. 1991-1992 ուսումնական տարուց Հայկական բժշկական ինստիտուտը տեղափոխվեց «Էրեբունի» բժշկական կենտրոն: Էրեբունի հիվանդանոցի բազայի վրա ծավալվեցին հիմնական կլինիկական առարկաների դասավանդումը: Առաջին անգամ ներքին հիվանդություններ առարկան սկսվեց դասավանդվել ոչ թե ֆակուլտետային և

հոսպիտալային թերապիայի ծրագրով, այլ առանձնացված, իբրև ինքնուրույն ծրագրեր՝ պուլմոնոլոգիա, կարդիոլոգիա, գաստրոէնտերոլոգիա, ռևմատոլոգիա, նեֆրոլոգիա և այլն: Կլինիկական ամբիոնների գործունեությունը համակարգում էր փորձառու և բանիմաց պրոֆեսոր Ռաֆայել Մամիկոնյանը: Պրոֆեսորադասախոսական կազմի մեջ ներգրավված էին ազգային ակադեմիայի ակադեմիկոսներ, թղթակից անդամներ, գիտության դոկտորներ և թեկնածուներ (բժշկական և կենսաբանական գիտությունների), դոցենտներ, պրոֆեսորներ:

Արդի պայմաններում կադրային ներուժին ներկայացվող պահանջները շարունակաում են մնալ բարձր: Ներկայումս ինստիտուտում աշխատում են շուրջ 150 բարձրակարգ մասնագետներ՝գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ, գիտության թեկնածուներ, դոցենտներ: Գիտական հզոր այս ներուժը լուրջ դերակատարություն ունի Հայաստանում՝ բժշկագիտության զարգացման գործում: ՀԲԻ-ում գործում են 16 ամբիոններ: ՀԲԻ-ի ամբիոնները տեղակայված են իր սեփական մասնաշենքում և 27 կլինիկական բազաներում, որոնք հանդիսանում են հանրապետության առաջատար բժշկական կենտրոնները: «Էրեբունի» Բժշկական կենտրոնը հանդիսանում է ինստիտուտի գլխավոր ուսումնա-արտադրական բազան, որտեղ ուսանողները ստանում են արժեքավոր գիտելիքներ և պրակտիկ փորձ: ՀԲԻ-ում գործում են երկու ֆակուլտետներ՝ Բուժական գործ և Ստոմատոլոգիական:

Հետազոտություն. ՀԲԻ-ը իր ռազմավարական ծրագրում կարևորում է բարձրագուն կրթության և հետազոտական աշխատանքների փոխկապակցված դերը կրթության որակի ապահովման և բարելավման գործում:

Միջազգայնացում. Ինստիտուտը ձգտում է ընդլայնել Հայաստանի և արտասահմանյան առաջատար բուհերի հետ համագործակցությանը, ակտիվացնել մասնակցությունը եվրոպական ինստիտուտների ընկերակցության, տեղական և միջազգային միջբուհական կազմակերպությունների ծրագրերում, զարգացնել ուսումնառության արդյունքների փոխճանաչման և կրեդիտների փոխանցման մեխանիզմները՝ նպաստելով ուսանողների և դասախոսների միջբուհական ակադեմիական տեղաշարժին և ՀԲԻ-ի միջազգային վարկանիշի ամրապնդմանը:

ՀԲԻ-ի միջազգայնացման ռազմավարական հիմնական նպատակներն և ուղղություններն են.

1. Միջազգային կապերի համակարգի վերանայում և գործունության զարգացման ռազմավարության մշակում:
2. Համագործակցային նոր ծրագրերի մշակում և առաջատար բուհերի հետ միջազգային համագործակցության զարգգացում:

3. Միջազգային ծրագրերում ուսանողների մասնակցության խթանման մեխանիզմների մշակում:
4. Ուսանողների, դասախոսների, վարչական կազմի շարժունության ապահովում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՀԲԻ առաքելությունն ամրագրված է կանոնանդրության և 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի մեջ: Առաքելության ձևակերպումը ներառում է ընդհանուր դրույթներ:

ՀԲԻ-ն հիմնադրվել է՝ որպես տեղական կողմնորոշում ունեցող (հենց այդ պատճառով է Հայկական անվանվել) և մատչելի կրթական ծառայություններ մատուցող (ուսման վարձը որոշակի մակարդակից ավել երբեք չի եղել) մասնավոր ուսումնական հաստատություն: Այս դրույթները ՀԲԻ ղեկավարության համար գործունեության ընդհանուր ուղենիշ են:

Հիմնադիրները մասնագիտությամբ բժիշկներ են:

Իր առաքելության և նպատակների ձևակերպումներում ՀԲԻ-ն առաջնորդվում է ՈԱՇ-ով և բժշկական կրթության առանձնահատկություններով:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՀԲԻ-ն մասնավոր կազմակերպություն է:

Որոշ ներքին և արտաքին շահակիցներ ընդգրկվել են ռազմավարական ծրագիրը մշակելու համար ձևավորված աշխատանքային խմբի կազմում:

Ռազմավարական ծրագիրը հաստատվել է գիտական խորհրդի կողմից, որի կազմում ներառված են ներքին շահակիցներ:

Շահակիցների շրջանում կան տարակարծություններ զարգացման առանձին ուղղությունների վերաբերյալ, մասնավորապես՝ գիտահետազոտական ինստիտուտ ստեղծելու, օտարերկրյա ուսանողներին կրթական ծառայություններ մատուցելու վերաբերյալ:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Ըստ ինքնավերլուծության՝ ՀԲԻ-ն իր առաքելության և նպատակների իրականացման արդյունքները գնահատելու համար կիրառում է վերջնարդյունքների գնահատման առանցքային ցուցիչներ (ԳԱՑ): Ռեկտորը և պրոռեկտորները յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ներկայացնում են ԳԱՑ-երի հաշվետվությունը՝ համաձայն ռազմավարական ծրագրի տվյալ տարվա ժամանակացույցի, որի հիման վրա գնահատվում են կատարված ծրագրերը և բացահայտվում չարվածների պատճառները:

Այդուհանդերձ, վերոնշյալ գործընթացի արդյունքում փոփոխությունները սակավաթիվ են և ռազմավարական բնույթի չեն, իսկ ցուցիչները հիմնականում քանակական չեն:

Դատողություններ. Առաքելության փաստաթղթային ձևակերպումները լիարժեքորեն չեն արտահայտում ՀԲԻ իրական առաքելությունը, որը ձևավորվել է հիմնադիրների կողմից և մինչ այժմ արդիական է: Կարելի է ասել, որ ՀԲԻ-ն ունի հստակ ձևավորված առաքելություն, սակայն այն դեռևս չի ստացել իր ֆորմալ ձևակերպումը: Այդուհանդերձ, դա չի խանգարում ՀԲԻ ղեկավարությանն իր գործողություններում առաջնորդվել իրական առաքելությամբ:

Չձևավորված առաքելության հստակ ձևակերպմանը կարող է խանգարել հիմնադիրների՝ գործադիր ղեկավարի պաշտոնի համատեղումը:

Չնայած ՌԾ մշակող աշխատանքային խմբում և այն հաստատող ԳԽ կազմում շահակիցների ներգրավվածությանը՝ ՀԲԻ-ն դեռևս չի հստակեցրել իր զարգացման որոշ կարևոր ուղղություններ, ինչը վկայում է, որ շահակիցների մասնակցությամբ արդյունավետ քննարկումներ չեն անցկացվել: ՀԲԻ-ն մասնավոր կազմակերպություն է, հետևաբար՝ առաջնահերթ են հիմնադիրների շահերը: Սակայն նույնիսկ հիմնադիրների կողմից դեռևս ձևավորված չէ ՀԲԻ հեռանկարային զարգացման վերաբերյալ միասնական տեսլական:

Նպատակների և խնդիրների վերանայման առկա մեխանիզմները չեն ապահովում նպատակների և դրանց իրականացմանն ուղղված գործողությունների արդյունավետության օբյեկտիվ գնահատում, քանի որ չեն կիրառվում քանակական ցուցիչներ, իսկ գնահատումներն էլ չեն վերածվում բարեփոխումների:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՀԲԻ ձևավորված և կայուն առաքելությունը, ներքին շահակիցների որոշակի մասնակցությունը նպատակների սահմանմանը՝ կարելի է եզրակացնել, որ ՀԲԻ գործունեությունը համապատասխանում է ձևավորված առաքելությանը, որը համահունչ է ՈԱԾ-ին:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀԲԻ ղեկավարումն իրականացվում է կանոնադրության համաձայն: Կառավարման մարմիններն են հիմնադիր խորհուրդը, ռեկտորը, գիտական խորհուրդը:

Հիմնադիր խորհրդի և գիտական խորհրդի գործունեությունը կարգավորվում է համապատասխան կանոնակարգերով, սակայն դրանք գրեթե ամբողջությամբ կրկնում են ՀԲԻ կանոնադրության համապատասխան հոդվածները:

Հիմնադիրների խորհուրդը բաղկացած է 4 հիմնադիրներից, ովքեր մասնագիտությամբ բժիշկներ են և միմյանց փոխարինելով հաջորդաբար զբաղեցնում են ռեկտորի պաշտոնը: Հիմնադիրների խորհրդի անդամներն ունեն առանձնացված սենյակներ ՀԲԻ տարածքում և յուրաքանչյուր շաբաթ ունենում են հանդիպումներ, որոնց ընթացքում հիմնականում քննարկվում են օպերատիվ կառավարման հարցեր:

Գիտական խորհուրդն, ըստ ինքնավերլուծության, ուսումնամեթոդական և գիտական գործունեությունը ղեկավարող կառավարման մարմինն է: Գիտական խորհրդի նիստերը, սակայն, գումարվում են ոչ հաճախ (սահմանված պահանջը՝ կիսամյակը առնվազն 2 անգամ):

Ինստիտուտի գործունեության տարբեր ոլորտների անմիջական ղեկավարումն իրականացնում են 3 պրոռեկտորները և 2 ֆակուլտետների դեկանները: Գիտական գծով պրոռեկտորի պաշտոնը թափուր է:

Որպես ֆակուլտետների կառավարման մարմիններ նախատեսված են ֆակուլտետային խորհուրդները, որոնց նախագահը համապատասխան ֆակուլտետների դեկաններն են: Ըստ ինքնավերլուծության՝ ֆակուլտետի կառավարման և գործունեության կարգը սահմանված է ՀԲԻ–ի կանոնադրությամբ և ֆակուլտետի կանոնակարգով, սակայն ֆակուլտետի կանոնակարգով որևէ ընթացակարգային խնդիր կարգավորված չէ՝ բացի դեկանի ընտրությունից (նույնը վերաբերում է ամբիոնի կանոնակարգին): Այդուհանդերձ,

դեկանները փաստացի նշանակվում են ռեկտորի կողմից. գիտական խորհրդի կողմից ընտրվելը ձևական բնույթ է կրում:

Առանձին ստորաբաժանումների գործունեությունը կարգավորվում է կանոնակարգերով (կանոնակարգ/կարգ/կանոնադրություն), մասնավորապես՝ որակի ապահովման կենտրոնը, տնտեսական մասը, հաշվապահությունը, կադրերի բաժինը և այլն: Նշված կանոնակարգերը, սակայն, օղակների միջև աշխատանքի հստակ և համակարգված բաժանում չեն սահմանում. մասնավորապես՝ պրոռեկտորն անցկացրել է կրթական ծրագրերի բենչմարքինգ, SS պատասխանատուն զբաղվում է ՀԲԻ կայքի բովանդակության ձևավորմամբ և այլն:

Թեև առկա են որոշակի ավանդաբար գործադրվող մոտեցումներ, ֆունկցիոնալ ստորաբաժանումները հիմնականում չունեն գործունեության ձևավորված հայեցակարգ:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Որոշ ներքին շահակիցներ ընդգրկված են ՀԲԻ գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների կազմերում: Ուսանողական խորհրդի նախագահը գիտական խորհրդի անդամ է:

Ըստ ինքնավերլուծության՝ դասախոսները և ուսանողները իրենց կարծիքը արտահայտում են նաև բուհում հրատարակվող «Էրեբունի» ամսաթերթում, ինչպես նաև հարցումների շրջանակներում:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Մշակված է «ՀԲԻ զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլան (2016-2020 թթ.)», սակայն առանձին գործողությունների կատարման համար պլանով նախատեսված ժամկետներն անորոշ են (սահմանված են մեծ միջակայքեր):

Ստորաբաժանումներն ունեն տարեկան աշխատանքային պլաններ, սակայն ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք բխեցված չեն ՀԲԻ ՌԾ-ից և դրանով սահմանված նպատակներից:

ՀԲԻ-ում մշակվել է «Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման ընթացակարգ», որը, սակայն բնույթով հայեցակարգ է և բուն ընթացակարգ չի սահմանում:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Ըստ ինքնավերլուծության՝ ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման համար շրջանավարտների շրջանում անցկացվում են հարցումներ՝ պարզելու համար նրանց բավարարվածությունն ստացած գիտելիքներից և կարողություններից:

Գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը, սակայն, կենտրոնացված է ներքին գործոնների վրա:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Մի շարք փաստաթղթեր գործում են վերամշակված խմբագրմամբ: Ընթացակարգերի զգալի մասն ընդունվել է գիտական խորհրդի 2 նիստերում (օգոստոս 2017 և օգոստոս 2019):

Հարկ է նշել, որ քաղաքականության և ընթացակարգերի վարչարությունը հիմնականում գտնվում է պլանավորման փուլում:

Թեև ՀԲԻ-ն ունի իրավաբան, և նա մասնակցում է ներքին փաստաթղթերի մշակմանը, փաստաթղթերի զգալի մասը չի նախատեսում կարգավորումներ, իմպերատիվ դրույթներ:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Մշակված է հարցումների որոշակի մեթոդաբանություն, որում ներառված են ստացվող տեղեկությունները գնահատող որոշ մեխանիզմներ (հիմնականում՝ վիճակագրական հավաստիությունը գնահատող): Նշված մեխանիզմները, սակայն, նոր են սկսում կիրառվել:Քանի որ որակի ապահովման գործընթացները նոր են իրականացվում, տարբեր մեխանիզմների արդյունավետությունը դեռևս գնահատված չէ:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Ըստ ինքնավերլուծության՝ տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների արդյունավետության մասին կարելի է դատել ուսանողների թվաքանակի ավելացումով, ՀԲԻ-ի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումով և վստահելի համբավի ձեռքբերումով: Նշվածները, սակայն ՀԲԻ կողմից չեն չափվում և չեն օգտագործվում՝ որպես բարելավման հիմք:

Դատողություններ. Այն, որ հիմնադիր խորհրդի և գիտական խորհրդի գործունեությունը կարգավորող կանոնակարգերը գրեթե ամբողջությամբ կրկնում են ՀԲԻ կանոնադրության համապատասխան հոդվածները, որ հիմնադիրների խորհրդի 4 անդամները միմյանց փոխարինելով հաջորդաբար զբաղեցնում են ռեկտորի պաշտոնը, որ հիմնադիրների խորհրդի անդամները հիմնականում քննարկվում են օպերատիվ կառավարման հարցեր,որ գիտական խորհրդի նիստերը հազվադեպ են գումարվում, վկայում է այն մասին, որ իշխանությունը կառավարման՝ ՀԲԻ կանոնադրությամբ նախատեսված 3 հիմնական մարմինների միջև բաշխված չէ: Իրերի նման դրությունը վտանգում է հիմնադիրների խորհրդի՝ որպես ռազմավարական զարգացման ուղղություններ ձևավորող և գործադիր կառավարման մարմիններին վերահսկող կամ հակակշռող մարմնի նշանակությունը, վտանգում է ռեկտորի՝ որպես զարգացման կայուն տեսլականով առաջնորդվող պրոֆեսիոնալ գործադիր կառավարչի ինստիտուտը, վտանգում է գիտական խորհրդի՝ որպես մասնագիտական կարողություններով առաջնորդվող ինքնուրույն որոշումներ կայացնող մարմնի հեղինակությունը:

Աշխատանքի ուղղահայաց բաժանման թերությունների և կառավարման գործող համակարգը մարդկային ռեսուրսներով ապահովելը չկարևորելու մասին է վկայում այն, որ պրոռեկտորների մեկի պաշտոնը թափուր է, ընդ որում՝ տվյալ ոլորտում ենթակառուցվածքի բացակայության պարագայում:

Ֆակուլտետների և ամբիոնների ինքնավարությունը վտանգված է ընտրովի պաշտոններում նշանակումներ կատարելով: Սա կարող է նաև կաշկանդվածություն առաջացնել կոլեգիալ մարմիններով որոշումներ կայացնելիս:

Թեև, կարելի է ասել, կառավարման համակարգի գրեթե բոլոր օղակների գործունեության կարգավորման նպատակով բոլոր փաստաթղթերն առկա են, փաստացի այդ փաստաթղթերի ամբողջությունը չի ապահովում պատշաճ կարգավորումներ, ինչը վտանգում է ոչ միայն առանձին օղակների կողմից պարտականությունների կատարումը, այլև ռեսուրսների արդյունավետ օգտագործումը պարտականություններից չբխող գործողությունների իրականացման պատճառով:

Դասախոսներն ու ուսանողները, ընդգրկված լինելով խորհուրդների կազմերում, ընդհանուր առմամբ ունեն հնարավորություն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, սակայն, ինչպես վերը նշվեց, կառավարման կոլեգիալ մարմինները չունեն ակտիվ և անմիջական մասնակցություն որոշումների ձևավորմանը:

Դասախոսների և ուսանողների համար առկա են իրենց կարծիքների արտահայտման տարբեր հարթակներ (ԳԽ, ամսաթերթ, հարցումներ և այլն), սակայն չկան որոշումների վրա ազդելու մեխանիզմներ և օրինակներ:

ՀԲԻ զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանով առանձին գործողությունների կատարման համար սահմանված ժամկետների անորոշ լինելը թույլ չի տալիս ժամանակի մեջ հստակ բաշխել գործողությունները և կազմել կարճաժամկետ ծրագրեր: Արդյունքում ՀԲԻ կառավարման համակարգի գործունեության և ՌԾ միջև առաջանում է խզում: Այս մասին են վկայում նաև ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանները:

Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման մշակված ընթացակարգը թույլ չի տալիս համադրել փաստացի իրականացվող գործողությունները սահմանված նպատակների հետ, ինչի արդյունքնում նպատակների իրականացումը մնում է չգնահատված, իսկ գործողությունները վտանգվում են ուղղված չլինել սահմանված նպատակներին: Նման իրավիճակում երկարաժամկետից կարճաժամկետ պլանների ձևավորումն անարդյունավետ է, և ՀԲԻ ամենօրյա գործունեությունը կարող է չմոտեցնել նպատակների իրականացմանը:

Թեև ՀԲԻ-ն իրականացնում է ներքին միջավայրի ուսումնասիրություն, գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության մեխանիզմների ներդրված չլինելը կարող է կործանարար լինել հատկապես մասնավոր բուհի համար: Միաժամանակ հարկ է նշել, որ կապակցված բուժհաստատության հասանելիությունը որոշ չափով փոխհատուցում է այս բացը: Արդյունքում ՀԲԻ-ն ունենում է հավաստի, սակայն ոչ բավականաչափ տեղեկություններ իր որոշումների հիմնավորվածությունն ապահովելու համար:

Չնայած որոշ փաստաթղթեր գործում են վերամշակված խմբագրմամբ՝ ընթացակարգերի զգալի մասը սահմանվել է գիտական խորհրդի 2 նիստերում (օգոստոս 2017 և օգոստոս 2019): Համապատասխան փաստաթղթերը, սակայն, հիմնականում չեն նախատեսում որևէ կարգավորում, ինչն անհնար է դարձնում դրանց ներդրումը՝ որպես ընթացակարգեր: Այս թերության բացահայտման համար փորձնական ժամանակ հարկավոր չէ, հետևաբար՝ ընթացակարգերի մի մասի սահմանումը միտված չի գործընթացների բարելավմանը: Այս պարագայում քաղաքականությունների և ընթացակարգերի պատշաճ բարելավում, բնականաբար, տեղի չի ունենում:

Թեև ՀԲԻ-ն փորձում է հարցումներից ստացվող տեղեկությունների հավաստիությունը գնահատել վիճակագրական գործիքներով, դա դեռևս ձևավորված մեխանիզմ չի, իսկ այլ

ձևերով ստացվող տեղեկությունների հետ կապված գործընթացների արդյունավետությունը չի գնահատվում:

ՀԲԻ առանձին օղակներ գիտակցում են, թե ինչ ցուցիչներով է կարելի չափել տեղեկությունների հրապարակման արդյունավետությունը, սակայն որևէ ցուցիչ դեռևս չի կիրառվում՝ վտանգելով նաև համապատասխան գործընթացների բարելավումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՀԲԻ կառավարման մարմինների միջև իշխանության բաշխված չլինելը և դրանից բխող մի շարք վտանգները, կառավարման համակարգի օղակների միջև աշխատանքի բաժանման ոչ հստակ լինելը, ներքին շահակիցների՝ իրենց առնչվող որոշումների վրա ազդելու երաշխիքների պակասը, կառավարման համակարգի գործունեության և ՌԾ միջև որոշակի խզումը, արտաքին միջավայրի գործոնների ուսումնասիրության պակասը, քաղաքականությունների և ընթացակարգերի ոչ պատշաճ վարչարարությունը, տեղեկատվության կառավարման մոտեցումների ձևավորված չլինելը՝ կարելի է եզրակացնել, որ ՀԲԻ կառավարման համակարգի արդյունավետությունը և նպատակներին միտվածությունը ապահովված չէ:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՀԲԻ-ն իր 2016-2020 թթ. Ռազմավարական զարգացման ծրագրում կրթական գործունեության արդիականացման և բարելավման նպատակով նախատեսել է ուսանողի կրթական կարիքների և առողջապահության համակարգի պահանջներին համահունչ վերանայել կրթական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով կրթական արդիական մեթոդաբանությանը և տեխնոլոգիաներին:

Համաձայն ինստիտուտի առաքելությանը և հավակնություններին՝ ՀԲԻ–ն իրականացնում է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների ՀՀ ԲԿ

պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի ապահովում և բարելավում՝ հիմնվելով շնորհվող որակավորումների և ակնկալվող կրթական վերջնարդյունքների վրա, որոնք նաև պետք է նպաստեն ուսանողների շարժունակությանը:

Կրթական ծրագրերը կազմված և ձևակերպված են՝ համաձայն ուսումնառության վերջնարդյունքների և արտացոլում են տեսական գիտելիքների և գործնական ունակությունների միջև եղած համակցությունը: Սակայն անհրաժեշտ է դիտարկել այն հանգամանքը, որ «ՄԿԾ-ների դասընթացների վերջնարդյունքների համապատասխանությունը»՝ կրթական և առարկայական ծրագրերի վերջնարդյունքների քարտեզը արդյունք է որոշակի մեխանիկական աշխատանքի:

Արտաքին շահակիցներն ունեն որոշակի ներգրավվածություն կրթական ծրագրերի մշակման և իրականացման մեջ: Պետական կրթական չափորոշիչների համաձայն (ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714 - Ն որոշման)՝ կրթական ծրագրերը ներառում են ուսումնական պլան, ուսումնական դասընթացի գրաֆիկ, ուսումնական դասընթացների առարկայական, ուսումնաարտադրական պրակտիկաների ծրագրեր: Սակայն որոշ դեպքերում կրթական ծրագրի մեջ առանձին դասընթացների վերջնարդյունքները սահմանված չեն:

Կլինիկական մտածողության և ճիշտ ախտորոշելու մակարդակը գնահատելու նպատակով որոշ դասընթացների ժամանակ կատարվում է սիմուլյացիոն պացիենտների վերլուծություն, այդ պատճառով պլանավորվել է ավելացնել կլինիկական առարկաների թիվը, որոնց ընթացքում կատարվում են նմանատիպ վերլուծություններ:

Առարկայական ծրագրերը միատեսակ չեն կազմված, երբեմն մակերեսային են, երբեմն չափազանց մանրամասն, սակայն չկա միասնական մոտեցում, ինչը հնարավորություն կտար կառուցել վերջնարդյունքների վրա հիմնված գիտելիքների ու հմտությունների աստիճանական ձեռքբերման պրոցես: Նկարագրերի մեջ ներկայացված անգլալեզու գրականությունը շատ քիչ է: Վերջինս թերևս ոչ թե նկարագրության թերացում է, այլև այդ ուղղությամբ առայժմ չկատարված քայլերի արտացոլանք:

Վերջնարդյունքները սահմանված չեն ըստ Բլումի տաքսոնոմիայով ակտիվ բառերի կիրառմամբ, ինչը խիստ դժվարացնում է չափելիությունը: Վերջնարդյունքների գնահատումը կատարվում է հիմնականում ինտուիտիվ:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ըստ ինքնավերլուծության «ՀԲԻ–ում դասավանդման և ուսուցման մեթոդները այնպես են ընտրվում, որ լինեն հնարավորինս ուսանողակենտրոն, ապահովեն բոլոր ուսանողների կողմից ուսումնառության ելքային արդյունքների մինիմալ շեմի հաղթահարում:» Ուսումնական պլանների և ծրագրերի ճիշտ ձևակերպման համար ամբիոնների կողմից մշակվել են համապատասխան մեթոդական ցուցումներ և հաստատվել ռեկտորի հրամանով:

Միաժամանակ, այցի շրջանակներում պարզ դարձավ, որ ուսանողակենտրոնության վերաբերյալ պատկերացումները նոր են ձևավորվում, դասավանդման և գնահատման մեթոդները չեն ընտրվում ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան: Որոշակիորեն դրական տենդենցներ կան կլինիկական առարկաների դասավանդման ընթացքում, որտեղ ուսանողների ակտիվ ընդգրկումը իրական կյանքի վիճակներում հնարավորություն է տալիս մոտենալ սահմանված վերջնարդյունքներին: Սակայն ընդհանուր առմամբ ոչ ուսանողների, ոչ պրոֆեսորադասախոսական կազմի մեջ չկա հստակ, միանման պատկերացում տվյալ դասընթացի վերջնարդյունքի մասին:

Վերջին տարիներին ավելի հաճախ են կիրառվում ինտերակտիվ և փոքր խմբերում դասավանդման մեթոդները, նաև մեծ տեղ է հատկացվում ուսանողների ինքնուրույն, գործնական և թիմային աշխատանքներին: Ուսանողների ինքնուրույն աշխատանքը խթանելու նպատակով կազմակերպվում են բաց դասեր, որոնց ընթացքում ուսանողը իր հայեցողությամբ ընտրում է թեմա տվյալ առարկայից, ներկայացնելով ռեֆերատի ձևով իր խմբի ուսանողների առջև, պատասխանելով նաև նրանց հուզող հարցերին:

Մշակված է «Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման ընթացակարգ», սակայն այդ փաստաթղթով հստակեցված չեն մեթոդների ընտրության ո՛չ քաղաքականությունը, ո՛չ ընթացակարգը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության բարձրացման մեջ մեծ դեր են կատարում ուսանողների և շրջանավարտների հետ կատարվող ֆոկուս-խմբային հանդիպումները:

Իրականցվում են նաև դասախոսների հավելյալ վերապատրաստումներ և արդիական դասավանդման մեթոդների փորձի փոխանակում: Սակայն ոչ բոլոր դասախոսներ են մասնակցում այդ վերապատրաստումներին:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Ուսանողների գնահատման համակարգի մեջ ներառվել է հիվանդի պատմության գրավոր փաստաթուղթը, որը հետագայում հաշվի է առնվում ամփոփիչ քննության ժամանակ: Յուրաքանչյուր տարվա ամփոփիչ ատեստավորման եզրակացության մեջ հանձնաժողովի նախագահը նշում է քննության դրական կողմերը, թերությունները և առաջարկությունները: Ինչպես նաև ուսանողները հնարավորություն ունեն բողոքարկել իրենց գնահատականը:

Ըստ ինքնավերլուծության՝ գնահատման օբյեկտիվությունը ապահովելու նպատակով գիտխորհրդում քննարկվել և որոշվել է ներկայացնել հրաման, որ առարկայական միջանկյալ քննությունների ժամանակ ամբիոնի դասախոսներից բացի ներկա լինի վարչական կազմի որևէ ներկայացուցիչ:

Գնահատումը բազմաբաղադրյալ է, ներառում է հաճախումը, ինքնուրույն աշխատանքը, տեսական գիտելիքները: Սակայն գնահատումը չի բխեցվում սահմանված վերջնարդյունքերից. վերջիններս պայմանական բնույթ են կրում, քանի որ վերջնարդյունքներում առկա գործնական հմտությունների ստուգումը հստակ չէ: Դրա մասին է վկայում նաև ՄԿԾ-ների դասընթացների վերջնարդյունքներին դասավանդման և գնահատման մեթոդների համապատասխանությունն արտացոլող աղյուսակի ոչ նպատակային լրացված լինելը:

«Հայկական բժշկական ինստիտուտի ուսանողների գիտելիքի գնահատման» կարգը չի արտացոլում գնահատման քաղաքականություն:

ՀԲԻ-ում առկա է ակադեմիական ազնվության երաշխավորման և գրագողության կանխարգելման քաղաքականությունն արտացոլող կարգ: Սակայն իրական կյանքի մեջ դրանց իրագործումը առայժմ տեսանելի ապացույցներ չունի: Այսպես, իբրև ինքնուրույն աշխատանքի գնահատման գործիք կիրառվող ռեֆերատներում չկային պատշաճ հղումներ, որը միշտ չէ, որ միայն ուսանողների թերացման արդյունք է:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ՀԲԻ-ն ուղղորդվում է Մ. Հերացու անվ. Պետական Բժշկական համալսարանի ծրագրերով, սակայն ՀԲԻ-ի կրթական ծրագրերը հիմնադրման օրվանից ստեղծվել են Բժիշկների Կատարելագործման ինստիտուտի ծրագրերի հիման վրա:

Առկա է «ՀԲԻ գործունեության արդյունավետության համեմատական վերլուծության (բենչմարքինգի) սկզբունքների, նպատակների, խնդիրների, քաղաքականության, ընթացակարգի և սխեմատիկ կառուցվածքի կարգ», որը, սակայն, միայն ընդհանուր նկարագրում է, թե ինչ է բենչմարքինգը՝ առանց անդրադառնալու կրթական ծրագրերին և հստակեցնելու դրանց բենչմարքինգի ընթացակարգը: Բացի վերոնշյալից՝ բենչմարքինգի տարրեր կիրառվել են նաև Ռուսաստանյան որոշ բուհերի հետ, որոնց ընտրության սկզբունքը հստակ չէր:

Համապատասխան կրթական ծրագրերը հնարավորություն են ընձեռում ուսումը շարունակել այլ ծրագրերով տվյալ ուսումնական հաստատությունում հանձնելով առարկայական տարբերությունները, ինչպես նաև ուսումական հաստատությունից դուրս:

ՀԲԻ-ում դասախոսների և ուսանողների շարժունությունը որպես այդպիսին զարգացած չէ: Ավելի շուտ փաստացի շարժունությունը պասիվ բնույթ է կրում. ուսանողների և դասախոսների շարժը ոչ թե որոշակի նպատակների, ծրագրերի իրագործման համար է կատարվում, այլ պատահական բնույթ է կրում՝ ուսանողի անբավարար առաջադիմություն կամ դասախոսի՝ այս կամ այն պատճառով մեկ ՄՈՒՀ-ից այլ ՄՈՒՀ տեղափոխվելու արդյունք:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Ըստ ինքնավերլուծության՝ ՀԲԻ քաղաքականությունն ուղղված է ՄԿԾ-երի արդյունավետության բարելավմանը, որին հասնում է մշտադիտարկման, ուսումնառության արդյունքների ինքնագնահատման և կրթական ծրագրերի վերանայման շնորհիվ: Կրթական ծրագրի մոնիթորինգի գործընթացը նախաձեռնում և իրականացնում է համապատասխան ուսումնական ստորաբաժանումը՝ երկամսյա պարբերականությամբ, մոնիթորինգի անցկացման ժամանակացույցի համաձայն:

Ուսուցման որակի գնահատման մեթոդական ապահովման ուղղություններն են շահակիցների ներկայացուցիչների ներգրավումը, կրթական ծրագրերի մոնիտորինգը, գիտելիքների մակարդակի և սովորողների հմտությունների (նաև շրջանավարտների կոմպետենցիաների) գնահատումը, դասախոսական կազմի կոմպետենտության գնահատումը, կատարվող աշխատանքի ինքնավերլուծությունը, մյուս բժշկական բուհերի հետ կատարվող համեմատական վերլուծությունը:

Մշակված է «Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգ»: Գործնականում, սակայն, ՄԿԾ-ների իրականացման նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացվում: Պարզ չէր նաև ՄԿԾ-ների վերանայման քաղաքականությունը:

Դատողություններ. ՀԲԻ մասնագիտությունների կրթական ծրագրերն իրենց կառուցվածքով համապատասխանում են ընդունված չափանիշներին, ինչը դրական է անդրադառնում կրթական ծրագրերի իրականացման պլանավորման վրա: Այդուհանդերձ, կրթական ծրագրերի առանձին բաղադրիչների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանց մի մասն «արհեստական» է: Նկատելի է առարկայական ծրագրերի մշակման միասնական մոտեցման և կրթական ծրագրից դրանց բխեցման գործելակերպի պակաս:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հարցում, չնայած առկա փաստաթղթերին, դասավանդողները վերջին հաշվով չեն ստանում բավարար ուղղորդում կամ խորհրդատվություն: Մեթոդների ընտրության քաղաքականություն, որպես այդպիսին, ձևավորված չէ: Նույնիսկ կլինիկական ուսուցման մասով չկա համակարգված մոտեցում: Արդյունքում՝ փաստացի գործադրվող մեթոդների ընտրությունը թողնված է դասավանդողներին: Միևնույն ժամանակ նկատելի են մեթոդների բարելավմանն ուղղված որոշ ջանքեր, սակայն դրանք դեռևս ինստիտուցիոնալ չեն:

Գնահատմանն առնչվող կարգավորումները, թեև փաստաթղթերի տեսքով առկա են, կրում են ձևական բնույթ: Գնահատման բաղադրիչները սահմանված են, սակայն չկան գնահատման չափորոշիչներ, ինչը կրիտիկական է հատկապես գործնական հմտությունների գնահատման հարցում: Գնահատման համակարգի նման թերացումները վերջին հաշվով վտանգում են թողարկվող մասնագետների ստացած կոմպետենցիաների նկատմամբ վստահությունը:

ՄԿԾ-ների համեմատության հստակ ընթացակարգ ՀԲԻ-ում չի գործում, սակայն տեղական բժշկական բուհերի ծրագրերին համապատասխանեցումը բավարար է ներպետական շարժունության համար: Միջազգային շարժունությանն ուղղակիորեն նպաստող տարրեր ծրագրերում ներդրված չեն:

Չնայած ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգի առկայությանը՝ ՄԿԾ-ների իրականացման նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացվում, ինչը հատկապես կարևոր խնդիր է կլինիկական ուսուցման պարագայում: Ծրագրերի բարելավման հիմնական ուղենիշն այլ բուհերի կողմից բարելավումներն են.նման մոտեցումը բացառում է ծրագրերի մակարդակում մրցակցային առավելության ձևավորումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով կրթական ծրագրերի վերջնարդյունքների և բաղադրիչների միջև առկա որոշակի խզումը, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականության և ուղենիշների պակասը, կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության նկատմամբ մշտադիտարկման

պակասը, գործնական հմտությունների գնահատման անհստակությունը, տարբեր ցիկլերի վերահսկողության իրականացման խնդիրները՝ կարելի է եզրակացնել, որ ՄԿԾ-ների պլանավորման, իրականացման և մշտադիտարկման գործընթացներն ունեն էական բարելավման անհրաժեշտություն:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Դիմորդների ընդունելությունը ՀԲԻ-ի բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում իրականացվում է ՀՀ Կառավարության 26.04.2012թ. որոշմամբ հաստատված «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի» համաձայն: Ընդունելությունն իրականացվում է հանրապետական միասնական քննությունների արդյունքում: Յուրաքանչյուր տարի ինստիտուտը իրավունք ունի ընդունել 180 ուսանող ստոմատոլոգիա մասնագիտությամբ (բակալավր և մագիստր) և 140 ուսանող բուժական գործ մասնագրտությամբ:

Ինստիտուտի ուսանողները ապրիլ-մայիս ամիսներին գնում են Երևանի և մարզերի, ինչպես նաև Վրաստանի հայաբնակ շրջանների ավագ դպրոցներ, հանդիպումներ են ունենում հիմնականում բնագիտական կողմնորոշում ունեցող աշակերտների հետ, զրուցում են աշակերտների և նրանց ծնողների հետ և պատմում իրենց մայր բուհի մասին: Մայիս–հունիս ամիսներին ՀԲԻ–ում անց են կացվում «բաց դռների օրեր», որոնց ժամանակ հետաքրքրված ուսանողները այցելում են բուհ, հանդիպում ուսանողների, դասախոսների հետ, տեսնում լսարանները, մարզադահլիճը, անատոմիայի յուրահատուկ թանգարանը, ֆանտոմային լսարանը, տեխնիկական լաբորատորիան, անօրգանական քիմիայի փորձասենյակը: Հիմնականում այդ օրերին նախատեսվում են ՀԲԻ-ի կամ հրավիրված մասնագետների դասախոսություններ հանրամատչելի թեմաներով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԲԻ-ում գործում են ընդունելության մեխանիզմներ: Մեծամասամբ բուհում իրենց կրթությունը շարունակում են հարակից քոլեջի ուսանողները: Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ

հավաքագրման մեխանիզմները մեծամասամբ կիրառվում են ՈՒԽ անդամների կողմից, ովքեր ժամանակ առ ժամանակ ուղևորվում են ՀՀ մարզերի դպրոցներ և ինստիտուտին առչվող տեղեկատվություն են տրամադրում:

Բուհի ընտրության դեպքում մեծ դեր է խաղում նաև ուսման վարձի մատչելիությունը, ինչը և մրցակցային առավելություն է ստեղծում այլ բժշկական բուհերի միջև:

Փորձագիտական այցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ թեև ինստիտուտը արդեն իսկ իրականացնում է միջազգային ուսանողների ընդունելություն, սակայն բացակայում են համապատասխան փաստաթղթերը, որոնք հնարավորություն կնձեռնեն օտար լեզվով ուսուցում իրականացնելու:

Ըստ ինքնավերլուծության՝ վերջին հինգ տարիների վիճակագրական տվյալները փաստում են, որ սովորողների հեռացումների հիմնական պատճառներն են՝ անբավարար առաջադիմությունը և բացակայությունները: Ուսանողների՝ իրենց դիմումի համաձայն ազատման հիմնական պատճառներն են բնակության վայրը փոխելը, սոցիալական պայմանները և անձնական խնդիրները:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողների կրթական կարիքների վերահանման հիմնական բաղադրիչներից են կազմակերպվող հարցումները (օրինակ՝ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցաշար, ռեսուրսների գնահատման հարցաշար և այլն): Ուսանողների շրջանում անցկացված հարցումների միջոցով և նրանց հետ հանդիպումների շնորհիվ հնարավոր է լինում պարզել նրանց կարծիքն ուսումնական ռեսուրսներով ապահովվածության, դասավանդման արդյունավետության վերաբերյալ, ընթացիկ քննությունների կազմակերպման որակի, պրակտիկաների անցկացման և ամփոփիչ ատեստավորման քննության որակի մասին:

Ինստիտուտում գործում է ուսանողական խորհուրդ, որը պարբերաբար վեր է հանում ուսանողների կրթական կարիքները (հանդիպումներ ուսանողների հետ, ուսանողների դիմումների վերլուծություններ և այլն):

Ուսանողների կրթական կարիքների վերահանմանն անմիջականորեն նպաստում է նաև ՀՀ օրենսդրությամբ և ինստիտուտի ներքին կանոնակարգերով սահմանված ուսանողների ներգրավվածությունը տարբեր խորհուրդներում (գիտական, ֆակուլտետային, ուսանողական և այլն), որտեղ և ներկայացվում ու քննարկվում են ուսանողների արձագանքները ինստիտուտի կողմից մատուցվող կրթական ծառայությունների, ինչպես նաև՝ ինստիտուտի գործունեության տարբեր ոլորտներին առնչվող հարցերի շուրջ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ որակի ապահովման կենտրոնը ներգրավվում է ուսանողներին համապատասխան հարցումների իրականացնելիս: Ուսանողներն իրենց անհանգստացնող հարցերն ուղղում են ՈՒԽ-ին, սակայն մեծամասամբ հարցերը չեն առնչվում կրթական կարիքներին:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ըստ ինքնավերլուծության՝ ՀԲԻ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրման հնարավորություններ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար: Լրացուցիչ պարապմունքների կազմակերպումն ու խորհրդատվության տրամադրումը ՀԲԻ-ում ծառայում են երկու նպատակի՝ նպաստել ուսանողի գիտելքների ձեռքբերմանը և նպաստել ուսանողի ապագա մասնագիտական աշխատանքին նախապատրաստմանը:

Լրացուցիչ պարապմունքներում ընդգրկվում են տարվա ընթացքում ցածր առաջադիմությամբ ուսումնառողներ, որոնք դասերից հետո շաբաթական 1-2 անգամ ստանալով առաջադրանքներ, լրացնում են ընթացքում բաց թողածը, գրում ռեֆերատներ և պատասխանում այդ թեմաների հետ կապված հարցերին, նրանց բացատրվում է անցած նյութը, պարզաբանվում են առարկայի կարևոր հիմնական հատվածները՝ ուսումնառողի գիտելիքները հասցնելով բավարար աստիճանի:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԲԻ-ում կա լրացուցիչ պարապմունքներին առնչվող հստակ սահմանված ժամանակացույց, որի ընթացքում այն ուսանողները, ովքեր ունեն բաց թողնված դասաժամեր կարող են հաճախել և լրացնել: ՀԲԻ-ում ուսանողների համար նաև գործում է անգլերեն լեզվի դասընթացներ, որը իրականացվում է վճարովի համակարգով:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ՀԲԻ-ում գործում է կուրատորների ինստիտուտը, որը նախատեսված է ուսանողներին օժանդակելու և ուղղորդելու համար: Որպես կուրատորներ հանդես են գալիս ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հասարակական հիմունքներով, շատ հաճախ դա նույն ամբիոնների որակի ապահովման պատասխանատուներն են:

Դեկանները և ուսումնական գծով պրոռեկտորը ունեն ուսանողների ընդունելության ամրագրված ժամեր:

Կիսամյակի ընթացքում, 1-2 անգամ, բոլոր կուրսերում դեկանները կազմակերպում են կիսամյակային խորհրդակցություններ, որոնց մասնակցում են տվյալ կուրսում դասավանդվող բոլոր առարկաների ամբիոնների վարիչները, կամ ամբիոնի որակի ապահովման պատասխանատուները:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ըստ ինքնավերլուծության՝ շրջանավարտների կապն աշխատաշուկայի հետ ամրապնդելու նպատակով կազմակերպվում են ավարտական կուրսի ուսանողների ամենամյա հանդիպումներ ՀՀ տարբեր շրջանների խոշոր կլինիկաների առաջատար մասնագետների հետ, ընդլայնվում են ուսումնաարտադրական պրակտիկաների բազաները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԲԻ-ում չի գործում կարիերայի կենտրոն:

ՀԲԻ-ում առկա է Շրջանավարների միություն, որը կապող օղակ է շրջանավարտների և ինստիտուտի միջև: Տվյալ կառույցի միջոցով հնարավոր է լինում վերահսկել ուսանողների կարիերայի աճն ինստիտուտն ավարտելուց հետո:

4.6 ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Ըստ ինքնավերլուծության՝ ամբիոնների դասախոսների գերակշիռ մասի կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվում են որոշակի թվով (2-5) ուսանողներ, որոնք մասնակցելով այդ աշխատանքներին դառնում են տեղական և միջազգային հանդեսներում տպագրված հոդվածների համահեղինակներ: Ուսանողները մասնակցում են ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներին և կատարում են հիմնականում ռեֆերատիվ բնույթի աշխատանքներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԲԻ-ում գործում է ուսանողական գիտական ընկերություն, որին անդամակցում են ոչ մեծ թվով ուսանողներ: Պարզ դարձավ նաև, որ շատ քիչ ուսանողներ են մասնակցում հետազոտական աշխատանքների, այդ թվում կիրառական հետազոտությունների:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողական խորհուրդն ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները ինստիտուտի ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց սպորտային, հասարակական, գիտական,

ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակույթային, բարոյական և հոգևոր զարգացմանը, ստեղծում կապեր ՀՀ բուհերի գիտական, կրթական և այլ կազմակերպությունների հետ:

ՈՒԽ-ը ձևավորվում է ներկայացուցչական ընտրությունների սկզբունքով: Մինչև 125 հոգուց բաղկացած յուրաքանչյուր կուրս ՈՒԽ-ում ունի 1 անդամ, իսկ 125-ից ավելի թվով ուսանողներ ունեցող կուրսը՝ 2: ՈՒԽ-ի անդամներն առաջադրվում են կուրսերում: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել են առավել շատ թվով ուսանողներ: ՈՒԽ-ը կազմված է ուսումնամեթոդական, լրատվության և տեղեկատվության, մշակույթի և ազատ ժամանցի հանձնաժողովներից:

Ըստ ինքնավերլուծության՝ 2008 թ.-ից ուսումնամեթոդական հանձնաժողովի անդամները ուսանողի շահերը պաշտպանելու նպատակով մասնակցում են գիտելիքների գնահատման բողոքարկման գործընթացին: Ուսումնամեթոդական հանձնաժողովի կողմից պարբերաբար անցկացրած սոց. հարցումների արդյունքները քննարկվում են ուսանողների և դասախոսների մասնակցությամբ ընթացող բանավեճային ակումբի թեմատիկ հանդիպումների ժամանակ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն ուսանողների իրավունքների պաշտպանությանն առնչվող ակտիվ գործունեություն չի ծավալում: Տվյալ խնդիրը նաև առկա է ուսանողների ուղեցույցի մեջ, որտեղ հստակ ընգծված չեն ուսանողների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Որակի ապահովումը, որպես ամբողջական համակարգ, սկսել է գործել 2012 թ.-ից, երբ ինստիտուտում բացվել է Կրթության որակի ապահովման կենտրոնը և հիմնվել են որակի ապահովման կենտրոնական և ֆակուլտետային հանձնաժողովները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԲԻ-ում ՈԱԿ-ի կողմից իրականացվում են հարցումներ ուսանողների կրթական և այլ կարիքների գնահատման նպատակով: Սակայն տվյալ հարցումների վերլուծությունը հասանելի չէ ուսանողների շրջանում: Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները մեծամասամբ դրական են գնահատում առկա ռեսուրսները, որոնց միջոցով ապահովվում է կրթության իրականացումը: Թերևս տվյալ տեսակետի ձևավորման վրա իր ազդեցությունը կարող է ունենալ այն, որ ուսանողները մեծամասամբ իրենց դասընթացները անց են կացնում հարակից Երեբունի հիվանդանոցում:

Դատողություններ. Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՀԲԻ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմներ: Հատկանշական է այն, որ ՀԲԻ ընդունվում են հարակից շրջանում գտնվող Բժշկական քոլեջի ուսանողները, սակայն մինչ օրս կնքված համաձայնագրերը քոլեջների հետ սակավաթիվ են, ինչը կնպաստեր ուսանողների թվի աճին: Դրական է գնահատվում այն, որ ուսանողները ներգրավված են ՈԱԿ-ում իրականացվող աշխատանքներում, ինչպես նաև այն, որ ուսանողները հնարավորություն ունեն բարձրաձայնելու իրենց առնչվող հարցերի վերաբերյալ, սակայն միևնույն ժամանակ ուսանողների մոտ ցածր է տեղեկացվածության մակարդակը, թե որ խնդրի պարագայում ում պետք է դիմել:

Չնայած այն հանգամանքին, որ ինստիտուտում չի գործում կարիերայի կենտրոն, միևնույն ժամանակ փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում այն, որ ինստիտուտը, գտնվելով Երեբունի հիվանդանոցի հարակից շրջանում և ունենալով համագործակցություն ինստիտուտի հետ, կարող է իր դրական ազդեցությունը ունենալ ինստիտուտի ուսանողների հետագա կարիերայի վրա:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում այն, որ ինստիտուտի ուսանողները հնարավորություն ունեն անցկացնել դասընթացներ հարակից հիվանդանոցում և կլինիկաներում, միևնույն ժամանակ անհրաժեշտություն է նկատվում ունենալ համապատասխան մուլյաժներով կահավորված լսարաններ:

Մտահոգիչ է քիչ քանակությամբ ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, որը վտանգում է ուսանողների մոտ վերլուծական կարողությունների ձեռքբերմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինստիտուտում գործում է ուսանողների հավաքագրման հստակ մեխանիզմներ, ուսանողների կարիքների վեր հանման նպատակով իրականացվում են հարցումներ, ուսանողներին հնարավորություն է ընձեռվում լրացնել բաց թողնված դասերը, ինչպես նաև իրականացվում են անգլերեն լեզվին առնչվող լրացուցիչ պարապմունքներ, ինստիտուտում գործում են ՈԻԽ և ՈԻԳԸ կառույցները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՀԲԻ-ն իր 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի նպատակներից մեկն է համարում դասախոսական և վարչական կազմի կայուն և որակյալ համալրումը, մասնագիտական առաջընթացի զարգացման համար արհրաժեշտ ռեսուրսների ապահովումը: Տվյալ նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ կրթական ծրագրերի և որակի ապահովման պահանջներին համահունչ ՊԴԿ-ի համալրում և բարելավում, նյութատեխնիկական բազայի բարելավում:

2011 թ.-ից ինստիտուտի դասախոսների ընտրության կարգում ամրագրված էր մրցույթային կարգով ընտրության մեխանիզմը՝ համաձայն «Դասախոսների ընտրության ընթացակարգ»-ի: Սակայն պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը հաճախ իրականացվել է (ամբիոնի վարիչի համաձայնությամբ) ինստիտուտի ռեկտորի հետ կնքած ուղղակի պայմանագրի հիման վրա:

Աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում բարձր ցուցանիշներ ապահովելու և հանձնարարությունները պատշաճ կատարելու համար աշխատողների համար կարող են կիրառվել խրախուսման տարբեր ձևեր, սակայն տվյալ մեխանիզմները համակարգային չեն:

Վերջին 5 տարիների ընթացքում թարմացվել և համալրվել է դասախոսական կազմը: Դասավանդողներին ներկայացվող պահանջները պարբերաբար վերանայվում են վարչական անձնակազմի և ՈԱԿ-ի ներկայացուցիչների կողմից, և հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմը կազմում է դասավանդող անձնակազմի 50,89%-ը (57 մարդ): Թափուր տեղերի համար հայտարարությունը տրվում է հանրապետական մամուլում, սակայն թափուր տեղերի համար հայտարարությունները պետք է տարածվեն ինչպես հանրապետական մամուլում, այդպես էլ համացանցում գործող համապատասխան հարթակներում: Դասախոսների ընտրության ընթացակարգն անցկացվում է շատ դեպքերում առանց մրցույթի:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

«Դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներն ըստ ՄԿԾ-ների» ինտեգրված չեն բուն ՄԿԾ-ներին: Պահանջները սահմանված չեն ըստ առանձին ՄԿԾ-ների:

Ընդհանուր առմամբ համալսարանում ներդրված են դասախոսական կազմի ընտրման պահանջները: Սակայն պահանջները ադապտացված չեն ըստ ՄԿԾ նպատակների և վրջնարդյունքների:

Ըստ ինքնավերլուծության՝ յուրաքանչյուր առարկայի համար դասախոսներ ընտրելիս ՀԲԻ-ն հաշվի է առնում վերջինիս բազային կրթությունը, որակավորման, աշխատանքային (դասավանդման) փորձը և մրցույթի արդյունքները:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Դասախոսական կազմի պարբերաբար գնահատման և իրենց պաշտոնին համապատասխանությունը ստուգելու համար կատարվում են դասալսումներ, հարցումներ, քննարկումներ, բացահայտվում են թերությունները, մշակվում են միջոցառումներ այդ ամենը շտկելու, վերացնելու համար: Առկա է դասալսումների անցկացման կանոնակարգ, սակայն ընթացակարգը հստակ սահմանված չէ: Ինչպես նաև առկա է դասախոսների ատեստավորման կարգ, սակայն սահմանված չեն ատեստավորման չափորոշիչները:

Դասախոսական կազմի որակի պարբերական գնահատում իրականացվել է ամբիոնների դասախոսների կողմից փոխադարձ դասալսումների միջոցով: Ըստ ինքնավերլուծության դասախոսների ատեստավորում իրականացվում է 3 տարին մեկ անգամ:

Գործում է դասալսումների իրականացման կարգ և հարցաթերթիկ:

2018-2019 թթ.-ին վերամշակվել է «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցաթեթիկը:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ

Համաձայն ինքնավերլուծության՝ դասախոսական կազմի պարբերաբար գնահատման և իրենց պաշտոնին համապատասխանությունը ստուգելու համար կատարվում են դասալսումներ, հարցումներ, քննարկումներ, բացահայտվում են թերությունները, մշակվում են միջոցառումներ այդ ամենը շտկելու, վերացնելու համար:

ՀԲԻ-ի կողմից կազմակերպվում են դասախոսների մանկավարժական հմտությունների ձեռքբերման և կատարելագործման դասընթացներ:

ՊԴ կազմի որակավորման բարձրացմանը նպաստում են նաև նրանց մասնակցությունը տարբեր միջազգային և տեղական գիտական և ուսումնամեթոդական սեմինարներին և կոնֆերանսներին:

Դասախոսների կատարելագործման գործընթացը կանոնակարգված չէ: Դասախոսների կատարելագործման ուղղությամբ ՀԲԻ-ի նախաձեռնողականությունը պասիվ է:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՀԲԻ-ում առկա է համապատասխան կարգ, որը նպաստում է մասնագիտական որակներ ունեցող ՊԴ կազմի ընտրությանը և պահպանմանը:
Առկա է «Հիմնական դասախոսական կազմի կայունությունն ապահովող ընթացակարգը», որը, սակայն, դեկլարատիվ բնույթի է:

ՊԴ կազմով ապահովվածության կայունությանը նպաստում է նաև աշխատանքի վարձատրության դինամիկ աճը: Օրինակ, 2017 թ. համեմատած նախորդ տարվա հետ, աշխատավարձների ֆոնդն աճել է 20%-ով: 2018–2019 թթ. աշխատավարձի ֆոնդի ընդհանուր քանակն ավելացել է:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ինստիտուտում այսօր աշխատում են 126 դասախոս, որոնցից 65-ը ունեն կոչում: Ինստիտուտի պրոֆեսորների միջին տարիքը 63 է, դոցենտներինը՝ 54:

Ուսումնական տարվա ընթացքում ինստիտուտի աշխատակիցներն ստանում են պարգևատրումներ, օգնություններ և այլն, սակայն ինստիտուտում դեռևս չի գործում աշխատողների սոցիալական կարգավիճակի մոնիթորինգի համակարգը և չի գնահատվում աշխատողների սոցիալական բավարարվածության մակարդակը:

ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր չկան:

Ինստիտուտում աշխատող ՊԴ կազմի միջին տարիքը 5 տարվա ընթացքում երիտասարդացել է 4 տարով:

Անձնակազմի համակարգչային գիտելիքների բարելավման նպատակով կազմակերպվում են գործնական պարապմունքներ, սակայն վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի համար դասընթացներ նախատեսված չեն:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Ըստ ինքնավերլուծության՝ վարչական աշխատակազմի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ՊԴ կազմի ճիշտ ընտրությամբ և նրանց ընդգրկումով ուսումնական պրոցեսում, որը բերում է ուսանողների ուսման որակի բարձրացմանը, բարձր ակադեմիական առաջադիմությանը, դուրս մնացող ուսանողների քանակի նվազեցմանը:

Դատողություններ. Փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ը ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար ապահովված է բավարար մասնագիտական որակներ ունեցող ՊԴ և ուսումնաօժանդակ կազմով:

Ռեկտորի կողմից հաստատվել է «Դասախոսների ընտրության ընթացակարգ», որը սահմանում է մրցութային կարգով դասախոսական կազմի համալրում: Սակայն դասախոսական կազմը երբեմն ընդունվում է ոչ մրցութային կարգով: ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի համալրման քաղաքականությունը դեռևս մշակման փուլում է գտնվում:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ կրթական ծրագրերի յուրաքանչյուր առարկայի համար դասախոսներ ընտրելիս հաշվի է առնվում դասախոսների բազային կրթությունը, մասնագիտական որակավորումը, աշխատանքային փորձը, սակայն ՀԲԻ-ը յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները դեռևս ունեն հստակեցման կարիք: Բացակայում են ՊԴ կազմի համալրման համար պաշտոնի անձնագրերը:

Դրական է նաև, որ ՀԲԻ-ը համալրվում է երիտասարդ դասախոսներով, որը կնպաստի դասախոսական կազմի սերնդափոխության գործընթացին:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև այն փաստը, որ ՀԲԻ-ը մշակել է դասախոսական կազմի պարբերաբար վերահսկման, գնահատման տարբեր մոտեցումներ՝ ներառյալ իրականացվող դասալսումներ, ուսանողական հարցումներ և այլն: Դրական է նաև, որ Ինստիտուտում գործում է ՊԴ կազմի խրախուսման համակարգ, ինչպես նաև կատարվում են ՊԴ կազմի որոշ վերապատրաստումներ: Անշուշտ, այդ մոտեցումները խթանում են Ինստիտուտի ՄԿԾ-ների արդյունավետ իրականացմանը: Սակայն կանոնակարգված չեն ՀԲԻ-ի աշխատակիցների որակավորման բարձրացման, ինչպես նաև

ՊԴ կազմի և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման համակարգերը: Վերապատրաստում անցնում են ոչ բոլոր դասախոսները, որոշ դեպքերում աշխատակիցները մասնագիտական վերապատրաստումներ անցնում են սեփական նախաձեռնությամբ: Ինստիտուտում դեռևս չի գործում աշխատակազմի սոցիալական կարգավիճակի մոնիթորինգի համակարգը, ինչպես նաև չի գնահատվում աշխատողների սոցիալական բավարարվածության մակարդակը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԲԻ-ում առկա են ՊԴ կազմի և ուսումնօժանդակ կազմի ընտրության որոշ քաղաքականություն, կատարվում են ՊԴ կազմի գնահատման և վերապատրաստման մոտեցումներ, որոնք ուղղված են դասավանդողների կատարելագործմանը, ինչպես նաև ՀԲԻ-ը կարևորում է ՊԴ կազմի երիտասարդացումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Համաձայն ՀԲԻ-ի ՌԾ-ի՝ բուհը նպատակաուղղված է զարգացնել ինստիտուտի գիտահետազոտական գործունեությունը: Տվյալ նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ նպաստել ինստիտուտի ներքին շահառուների գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության աճին, նպաստել ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ըստ ինքնավերլուծության՝ ՀԲԻ-ի զարգացման կարևորագույն նպատակներից մեկը բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվաքանակի կայուն աճի ապահովումն է, գիտական հետազոտությունների դերի կարևորումն է, ինչպես նաև կրթության և գիտակենսաբժշկական նորարարությունների ներդաշնակ աշխատանքային միջավայրի ստեղծումն է:

Համաձայն ինքնավերլուծության՝ փորձարարական հետազոտությունները ինստիտուտի ուսանողներն իրականացնում են այն գործընկեր կազմակերպություններում,

որտեղ իրենց գիտական հետազոտություններն են իրականացնում ՀԲԻ դասախոսները, սակայն ներկայացված չէ թե ինչպիսի գիտահետազոտական աշխատանքներ են կատարվում ՀԲԻ-ում:

2019 թ. հաստատվել է «Կարգ Հայկական բժշկական ինստիտուտի գիտական հետազոտությունների ռազմավարությունը: Կազմակերպման ու համակարգման կառուցվածքը», որով սահմանցած են որոշ հավակնություններ (առանց իրատեսականության գնահատման): Հետաքրքրությունների շրջանակը հստակեցված չէ:

Համաձայն 2016-2020 թթ. ՌԾ՝ ինստիտուտի գիտահետազոտական գործունեությունը զարգացնելը ռազմավարական նպատակ է: Սակայն այդ նպատակից բխեցված խնդիրներն ու գործողությունները անորոշ են և հետևաբար՝ հստակ գործողություններ չենթադրող: Բացի այդ՝ ՌԾ-ն չի արտահայտում ինստիտուտի հետազոտական հետաքրքրությունների շրջանակն ու հավակնությունները:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀԲԻ–ում դասավանդում են մի շարք շատ անվանի գիտնականներ, որոնց գիտական աշխատանքներով են պայմանավորված հետազոտության ոլորտում ինստիտուտի հավակնությունները և հնարավորությունները: Իրականացվում են կարճաժամկետ և միջնաժամկետ գիտահետազոտական աշխատանքներ, սակայն ներկայացված չէ, թե որոնք են տվյալ աշխատանքները:

Գիտական ոլորտում երկարաժամկետ ռազմավարության հիմնական նպատակային դրույթը գիտական կենտրոնի (ինստիտուտի) ստեղծումն է, որի իրականացման ընթացակարգը ենթադրում է նաև միջնաժամկետ ու կարճաժամկետ գիտական ծրագրերի մշակում և շարունակական իրականացում, այդ թվում՝ սեփական երիտասարդ գիտական կադրային կազմի ընդլայնման նպատակով: Սակայն այցից պարզ դարձավ, որ գիտական կենտրոնի (ինստիտուտի) ստեղծում չի նախատեսվում:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ գիտահետազոտական աշխատանքները հիմնականում կատարվում են այն թեմաների շուրջ, որոնք առավել կիրառելի են տեսական և պրակտիկ բժշկության բնագավառներում, սակայն ներկայացված չէ թե ինչպես է կառավարվում և կարգավորվում այս գործընթացը:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Ըստ ինքնավերլուծության՝ ՀԲԻ-ը հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը ապահովելու առումով կազմակերպել է բարենպաստ պայմաններ («Էրեբունի» բժշկական կենտրոնում, ԳԱԱ ինստիտուտներում) որակյալ հետազոտությունների իրականացման համար:

Ինքնավերլուծության մեջ նշվում է որ, հետազոտության և զարգացման ծրագրային նպատակները իրականացնելու համար վերջին երեք տարվա ընթացքում հաստատության բյուջեից հատկացվել է որոշակի գումար (2 տոկոս): Սակայն ներկայացված չեն հետազոտության և զարգացման ծրագրային նպատակները: Գիտությանը հատկացված միջոցների օգտագործման արդյունավետությունը չի գնահատվում:

ՀԲԻ-ում երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու նպատակով բուհը աջակցում է բարձր կուրսի ուսանողներին ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

«Կարգ Հայկական բժշկական ինստիտուտի գիտական հետազոտությունների ռազմավարությունը: Կազմակերպման ու համակարգման կառուցվածքը» փաստաթղթով սահմանված են որոշ ընթացակարգեր, ինչպես նաև բուհում սկսում է գործել հետազոտությանը օժանդակող համակարգ, որը միտված է աշխատանքի տեղավորելու գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներին՝ հետազոտական աշխատանքներին մասնակցելու նպատակով:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀԲԻ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը: ՀԲԻ-ի հիմնադրման օրվանից հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ, ինչպես նաև կազմակերպվել են մի շարք ուսանողական գիտական կոնֆերանսներ: Տպագրված ցանկում առկա են բազմաթիվ դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ: Վերջին տարիներին՝ 2016-2019 թթ.-ին տպագրությունների քանակն զգալի պակասել է:

Ըստ ինքնանվերլուծության՝ սկսած հիմնադրման օրից ՀԲԻ-ն հրատարակում է «Էրեբունի» ամսաթերթը, որտեղ լուսաբանվում են ինստիտուտում և հիմնական ուսանողական բազայի՝ «Էրեբունի» բժշկական կենտրոնի կյանքում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունները: Նշված ամսագրում, ինչպես նաև «Առողջապահություն», «Բժշկագիտություն» հանդեսներում և մի շարք այլ ամսագրերում շատ հաճախ հոդվածներով հանդես են գալիս ՀԲԻ-ի ուսանողները և դասավանդողները:

Ինքնավերլուծության մեջ նշված է նաև, որ ՀԲԻ–ին հանդիսանում է «Բանբեր ստոմատալագիայի և դիմածնոտային բժշկության» գիտագործնական հանդեսի տեղեկատվական աջակիցը, որը լույս է տեսնում ՀԲԻ–ի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Ըստ ինքնավերլուծության՝ Հայկական բժշկական ինստիտուտում դասավանդում են 24 գիտության դոկտորներ և պրոֆեսորներ, արտասահմանյան ակադեմիաների 5 անդամներ, բազմաթիվ գիտության թեկնածուներ: ՀԲԻ-ը կազմակերպում է ամենամյա ուսանողական միջբուհական գիտական կոնֆերանսներ, որի նյութերը (հոդվածներ, թեզիսներ) տպագրվում են գիտական ժողովածուի տեսքով: 2019 թ. հաստատվել է «ՀԲԻ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները», սակայն այդ փաստաթղթի նպատակը և կիրառությունը սահմանված չեն:

Դատողություններ. Փորձագիտական խումբը դրական է համարում այն փատը, որ ՀԲԻ-ը ՌԾ-ում կարևորում է գիտահետազոտական աշխատանքի դերը բժշկական կրթության մեջ, ավելին, ներառում է ինստիտուտի գիտահետազոտական գործունեության զարգացմանը ուղղված խնդիրներ: Սակայն, ՌԾ-ն չի արտահայտում ինստիտուտի հետազոտական հետաքրքրությունների շրջանակն ու հավակնությունները: Առկա գիտական հետազոտությունների ռազմավարության կարգը հիմնականում նվիրված է գիտության կազմակերպմանն ու համակարգմանը, որտեղ հստակ չեն նշված կարճաժամկետ, միջնաժամկետ ծրագրերը, ինչպես նաև ինստիտուտի գիտական գործունեության հիմնական ուղղությունները: Կարգում ներկայացված է գիտական գործունեության կառավարման մոդել, որը սակայն դեռևս չի իրականացվում : Հստակեցված չեն և թերի են հսկվում ամբիոնական գիտական թեմաները, բացակայում են գիատահետազոտական աշխատանքի կատարման վերաբերյալ հաշվետվությունները: Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ գիտահետազոտական աշխատանքների զարգացման նպատակով ՀԲԻ-ը համագործակցում է «Էրեբունի» բժշկական կենտրոնի և հատկապես ԳԱԱ մի շարք ինստիտուտների աշխատակիցների հետ և օգտագործում այդ հաստատությունների ռեսուրսները: Սակայն այս մոտեցումը դժվար հսկվող է և նաև ռիսկային ՀԲԻ-ի գիտահետազոտական աշխատանքների կայուն և անխափան իրականացման տեսանկյունից: Այս համագործակցությունը պետք է զուգորդված լինի ՀԲԻ-ի սեփական գիտական հավակնությունների և ուղղությունների, ինչպես նաև սեփական ռեսուրսների (գիտական ստորաբաժանումների) հետ: Ավելին, այցից պարզ դարձավ, որ Հաստատությունը ֆորմալ է

կարևորում գիտահետազոտական աշխատանքի իրականացումը, դրա զարգացումը համարում է ոչ իրատեսական, քիչ ֆինանսական միջոցներ է հատկացնում աշխատանքների իրականացման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ ժամանակակից գիտահետազոտական լաբորատորիաների բացակայությունը խոչընդոտ կհանդիսանա կառույցի ներսում գիտական ստորաբաժանումների ստեղծմանը, որը ՀԲԻ-ը պլանավորում է իրականացնել հետազոտությունների հեռանկարային ռազմավարական ծրագրում:

ՀԲԻ-ը որոշ մոտեցումներ է կիրառում հետազոտական գործունեության միջազգայնացման խթանման ուղղությամբ: Դիտվում է աշխատակազմի որոշ անդամների տարբեր մասնագիտական գիտաժողովներին մասնակցության բարձր ակտիվություն, ինչը շատ կանոր է գիտահետազոտական աշխատանքների արդիականացման համար: Սակայն դիտվում է աշխատակազմի տեղական և միջազգային գիտության և կրթության համար տրամադրվող դրամաշնորհներին մասնակցության ցածր ակտիվություն: Չնայած նրան, որ հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ, սակայն դրանք հիմականում մենագրություններ, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ են: ՀԲԻ-ի աշխատակիցների տպագրված գիտական աշխատանքների ցուցանիշները բարձր չեն. տպագրված գիտական աշխատությունները հիմնականում գիտաժողովի նյութեր են, սակավաթիվ են նաև գրախոսվող, ազդեցության գործակցով միջազգային ամսագրերում տպագրված աշխատությունները:

ՀԲԻ-ը որոշ մոտեցումներ է կիրառում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների ստեղծման ուղղությամբ: Փորձագիտական խումբը դրական է համարում ՈՒԳԸ-ի ստեղծումը և ամենամյա ուսանողական միջբուհական գիտական կոնֆերանսների իրականացումը, որի նյութերը (հոդվածներ, թեզիսներ) տպագրվում են գիտական ժողովածուի տեսքով: Սակայն, երիտասարդների գիտական հետազոտություններում ներգրավվածությունը դեռևս ցածր է, մասնավորապես՝ ՀԲԻ-ում գիտահետազոտական կենտրոնի կամ գիտահետազոտական լաբորատորիաների բացակայության, երիտասարդների գիտությամբ զբաղվելու ցածր մոտիվացման և այլ պատճառներով:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ում գիտահետազոտական ուղղությունը դեռևս ունի չլուծված խնդիրներ. բացակայում են ՀԲԻ-ի հետազոտական ուղղություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն, ինչպես նաև առկա չեն երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ հստակ ծրագրեր: Հստակ չեն հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի կապի ստեղծման

մեխանիզմները, որոնք մեծամասամբ կապված են թերի նյութատեխնիկական ռեսուրսների և գիտական գործունեության ոչ լիարժեք կառավարման մեխանիզմների հետ:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Ըստ ինքնավերլուծության՝ կլինիկական բազաների վարձակալական տարածքներում իրագործվող ուսումնառությունը հնարավորություն է տալիս ուսանողին ձեռք բերել մասնագիտական գիտելիքներ՝ օգտվելով ժամանակակից սարքավորումներից: Ռազմավարական ծրագրով կարևորած են ՀԲԻ-ի լսարանների, շենքային պայմանների, նյութատեխնիկական բազայի, կլինիկաների դասասենյակների վերանորոգման և բարելավման խնդիրները, ամբիոնները համապատասխան նյութերով և պարագաներով համալրելը, ուսումնագիտական լաբորատոր բազաների ընդլայնումը, համակարգչային գործունեությունը բարելավելու անհրաժեշտությունը, ինչը և կատարվում է փուլ առ փուլ:

Կլինիկական ամբիոնները տեղակայված են 27 բարձրակարգ բժշկական կենտրոններում: Կլինիկական դասընթացները և ուսումնաարտադրական պրակտիկան անց են կացվում կլինիկաներում՝ հատուկ կահավորված սենյակներում և տարածքներում, որոնք վարձակալական հիմունքներով պատկանում են բուհին և օգտագործվում:

Ինստիտուտի կլինիկական առարկաների դասավանդումը տարվում է համապատասխան ծրագրով, տեղի բարձրորակ մասնագետների մասնակցությամբ, կլինիկական բաժանմունքներում, հագեցված լաբորատորիաներում, վիրահատական սրահներում, վիրակապարաններում՝ ըստ կլինիկաների հետ կնքած պայմանագրերի:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ՀԲԻ-ի Ռազմավարական ծրագրում կարևորված են ինստիտուտի լսարանային ֆոնդի, շենքային պայմանների, նյութատեխնիկական բազայի, կլինիկաների դասասենյակների, գրադարանի և ուսումնական միջավայրի այլ բաղկացուցիչների վերակառուցման ու վերազինման խնդիրներ:

ՀԲԻ-ի ֆինանսավորման հիմնական աղբյուրը ուսման վարձերն են: Բուհի ֆինանսական գործունեությունը կատարվում է՝ համաձայն բուհի կանոնադրության:

ՀԲԻ-ի յուրաքանչյուր տարվա ֆինանսների տնօրինումը կատարվում է հիմնադիր խորհրդի կողմից, ելնելով նախորդ տարվա ընթացքում կատարված ծախսերից և մուտքերից, կատարվում է ֆինանսական միջոցների բաշխումը ՀԲԻ-ի տարբեր կառույցների ծառայությունների միջև:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Յուրաքանչյուր տարի, ելնելով նախորդ տարվա ուսանողների ընդունելությունից հետո վարձավճարային մուտքերից, կառավարման խորհրդի կողմից կազմվում է նախահաշիվ և ռեկտորի կողմից տրվում է հրաման, ելնելով նախորդ տարվա ենթահաշիվներից, որտեղ իրենց տեղն են գտնում աշխատավարձերը, ուսումնական պրոցեսը ապահովելու նպատակով ծախսվող լաբորատոր և աշխատանքային նյութերի գնումը, գրադարանի, լաբորատորիաների և դասանենյակների վերանորոգման և վերազինման ծախսերը, վարձակալական հիմունքներով ուսումնական և ուսումնաարտադրական բազաների ֆինանսավորումը, տնտեսական ծախսերը և այլ անհրաժեշտ գնումները: Բյուջեն կազմելիս հաշվի են առնվում բոլոր ստորաբաժանումների ներկայացված դիմում հայտերը:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Առկա է «Նյութատեխնիկական և մեթոդական հագեցվածությամբ դասավանդողների և ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցում-գնահատման կանոնակարգ (վերահաստատված)», սակայն այն չի կարգավորում ընթացակարգը և հետևանքները:

Ըստ ինքնավերլուծության՝ և՛ ուսանողները, և՛ ինստիտուտը բավարար չեն համարում առկա ռեսուրսները:

Տեսական ամբիոններում ոչ բավարար են ներկայացված տեխնիկական ռեսուրսները և գիտալաբորատոր բազան, ինչի բարելավման նպատակով բուհը պլանավորել է համագործակցել արտասահմանյան կազմակերպությունների հետ: Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել ինստիտուտի ռեսուրսային բազան ընդլայնելու և կրթական ծրագրերին համապատասխանեցնելու ուղղությամբ:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Ինստիտուտի տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կարգավորվում են ՀԲԻ-ի ներքին կարգապահական կանոններով, ՀՀ օրենսգրքով և այլ իրավական ակտերով: Տեղեկատվությունը և գործավարությունը ինստիտուտում կարգավորվում է աշխակազմի ղեկավարի և կադրերի տեսուչի կողմից, ովքեր իրականացնում են ինստիտուտի հասցեով ստացվող նամակների և այլ գրությունների, փաստաթղթերի ընդունում, գրանցում, հաշվառում ու բաշխում դրանց կատարողներին, ինստիտուտի անունից ուղարկվող նամակների և այլ գրագրությունների, փաստաթղթերի գրանցում և առաքում, նաև ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների միջև իրականացվող փաստաթղթաշրջանառության գրանցում, փաստաթղթերի կատարման ժամկետների վերահսկողություն, սահմանված կարգով բաժնի գործերի հանձնում ինստիտուտի արխիվ, գործավարության ընթացքում փաստաթղթերի պահպանման և օգտագործման ապահովում, ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներում փաստաթղթերի ճիշտ ձևակերպման և վարման մեթոդական օգնություն:

Բուհում առկա է փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման կարգը: Սակայն կարգի մասին գրված չէր ՀԲԻ ներքին կարգապահական կանոններում կամ այլ ներկայացված փաստաթղթերում:

ՀԲԻ-ի ներքին կարգապահական կանոններով չի սահմանվում փաստաթղթավորման կարգը:

7.6 ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀԲԻ-ի անվտանգությունն իրականացվում է օրենսդրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով: ՀԲԻ-ի անվտանգությունն իր գործառույթներում ներառում է ՀԲԻ-ին պատկանող շենքի, հարող

բակերի եւ տարածքների, ամբողջ գույքի ապահովման կազմակերպումը, ինստիտուտում գտնվող ուսանողների, ՀԲԻ-ի ղեկավարության և աշխատողների պարտականությունների իրականացման ընթացքում անվտանգության ապահովումը: Առողջապահական և անվտանգության պահպանման ծրագրերի միջոցով ՀԲԻ-ը ապահովում է առողջ և անվտանգ միջավայր: Ինստիտուտում իրականացվում է շուրջօրյա հսկում պարետների միջոցով, ցերեկվա ժամերին դրան միանում են ուսխորհրդի կամավորները և սանմաքրող անձնակազմը, որոնք թվով 6 են և ցերեկվա ընթացքում նպաստում են տարածքի հսկողությանը, տարացքը հսկվում է նաև տեսախցիկների միջոցով:

Կառուցվել են շենքին մոտենալու թեքահարթակներ, առաջին հարկի զուգարաններում ամրացվել են բռնակներ, բուֆետում դրվել է հատուկ տետր, որտեղ շաքարային դիաբետով հիվանդները կամ որևէ սննդամթերքի նկատմամբ ալերգիա ունեցողները կարող են պատվիրել հատուկ սնունդ:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Կրթության որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել է ուսումնական ռեսուրսների և խորհրդատվական ծառայությունների արդյունավետության, կիրառելիության, հասանելիության գնահատմանն ուղղված գործիքակազմ և ընթացակարգ: Համաձայն ընթացակարգերի պետք է կատարվի ֆինանսական և ուսումնական ռեսուրսների պլանավորման, ձեռքբերման, կիրառման և սպասարկման բազմակողմանի մշտադիտարկում՝ հիմնված հարցումների արդյունքների, կարիքների ուսումնասիրման, համապատասխան ստորաբաժանումների հաշվետվությունների ուսումնասիրման վրա: Ռեսուրսներով բավարավածության աստիճանը հիմնականում գնահատվում է հարցումների, հանդիպումների և հարցազրույցների միջոցով, որոնք պարբերաբար անց են կացվում ներքին և արտաքին շահակիցների հետ: Հարցումների արդյունքներն ընդհանրացված են:

Հարցման մեջ կան տասնյակ կետեր, որոնք չունեն բացատրություններ կամ ներառված չէին գալիք ռազմավարության ծրագրի մեջ որպես խնդիր:

Դատողություններ. Ուսումնական միջավայրի կարևորագույն բաղադրիչը կլինիկաներն են, որտեղ ուսումնառողները ոչ միայն հնարավորություն են ստանում աշխատել իրական սարքավորումների և հիվանդների հետ, այլև կարողանում են գործել իրականին առավելագույնս մոտ միջավայրում: Տեսական ուսուցման համար ՀԲԻ լաբորատոր պայմանները համալրման կարիք ունեն: :

Ֆինանսական ռեսուրսների գրեթե միակ աղբյուրն ուսման վարձավճարներն են.եկամուտների դիվերսիֆիկացվածության նման պակասը ռիսկային է: Ֆինանսական

պլանավորումը կտրված է ռազմավարական ծրագրից, ինչի արդյունքում ՌԾ առանձին նպատակներ մնում են առավելապես դեկլարատիվ: ՀԲԻ-ն ձգտում է հնարավորինս միջոցներ հատկացնել նախահաշիվներով արտացոլված կարիքների բավարարմանը, սակայն միջոցների սահմանափակության պայմաններում առավել ևս կարևոր է սահմանել առաջնահերթություններ և ռեսուրսների հատկացումն իրականացնել դրանց համապատասխան:

ՀԲԻ թե՛ սեփական, թե՛ վարձակալվող նյութական ռեսուրսային բազան ծառայում են ծրագրերի իրականացմանը: Այն, որ պարբերաբար ռեսուրսներ են ուղղվում շենքային պայմանների բարելավմանը, ցույց է տալիս, որ ՀԲԻ-ն կարևորում է իր ռեսուրսային բազայի արդիականությունը: Նույնը սակայն, միայն վերապահումով է կարելի վերագրել գրադարանային ռեսուրսներին:

Թեև փաստաթղթաշրջանառությունը ՀԲԻ-ում մշտապես ընթացող երևույթ է, դեռևս գնահատված չէ դրա արդյունավետությունը: Գրեթե չեն կատարված փաստաթղթաշրջանառության թվայնացման ուղղությամբ քայլեր:

ՀԲԻ ընդհանուր առմամբ կարողանում է ապահովել անվտանգ միջավայր, ինչը նաև պայմանավորված է բժիշկների մեծ թվով: Շենքային պայմանները հիմնականում հարմարեցված են հատուկ կարիքների ունեցողների համար, սակայն հարմարեցված ուսումնական նյութեր չկան:

ՀԲԻ-ն փորձում է գնահատել առկա ռեսուրսների արդյունավետությունը ներքին շահակիցների տեսանկյունից, սակայն դեռևս չի ներդրել լիարժեք գործիքակազմ:

Եզրակացություն: Հաշվի առնելով արդյունավետ ուսումնական միջավայրը կլինիկաներում, սարքավորումների և հիվանդների հետ աշխատելու հնարավորությունը, շենքային պայմանների բարելավմանն ուղղվող միջոցները, անվտանգ միջավայրը՝ կարելի է եզրակացնել, որ առաքելության և նպատակների իրականացման համար ՀԲԻ-ն ունի բավարար ռեսուրսներ:

Եզրահանգում: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է բավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՀԲԻ-ի գործունեության հիմնական հաշվետու փաստաթուղթը տարեկան հաշվետվությունն է, որն արտացոլում է գործունեության տարբեր բնագավառներում կատարված աշխատանքները: Հաշվետվողականության ձև է նաև ՀԲԻ-ի ռազմավարական ծրագրի և ընթացիկ աշխատանքների կատարման ընթացքի մասին քննարկումները գիտական խորհրդում:

2019 թ. հաստատվել են «Մեխանիզմներ Հայկական բժշկական ինստիտուտի՝ հասարակությանը տեղեկացնող գործընթացների թափանցիկության և հասանելիության» և «Ընթացակարգ ՀԲԻ կողմից սահմանված հասարակական պատասխանատվության հաշվետվողականության կարգի» փաստաթղթերը: Նշվածներից առաջինով, սակայն, որևէ կարգավորում չի սահմանվում. փաստաթուղթը ոչ թե սահմանում է գործադրման ենթակա մեխանիզմները, այլ ներառում է ոչ իմպերատիվ ընդհանուր նկարագրություն: Նշված երկրորդ փաստաթղթով թվարկվում են որոշ մեխանիզմներ, սակայն դրանց զգալի մասի գործադրման պարբերականություն, պարտավորվածություն սահմանված չէ:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

Ըստ ինքնավերլուծության՝ տեղեկատվական գործընթացում կարևորվում է ՀԲԻ-ի պաշտոնական կայքը, որտեղ հասարակությանը հասանելի են դառնում ինստիտուտի իրադարձությունների, գործունեության և իրականացվող միջոցառումների կայացումը: Կայքի թարմացման հաճախականությունը, սակայն, ցածր է:

Կայքը եռալեզու է, բովանդակության թարմացմամբ զբաղվում է SS պատասխանատուն՝ խորհրդակցելով բուհի տարբեր ստորաբաժանումների հետ:

Ընթացակարգերի մի մասը տեղադրված է կայքում, սակայն դրանք հիմնականում թարգմանված չեն:

Նաև հրատարակվում է «Էրեբունի» ամսաթերթը, որի վերջին համարների էլեկտրոնային տարբերակները տեղադրվում են կայքում: Ամսաթերթը համատեղ է և միայն մասամբ է լուսաբանում ՀԲԻ գործընթացները:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ՀԲԻ-ում մշակվել է «Մեխանիզմներ Հայկական բժշկական ինստիտուտում հասարակության հետ հետադարձ կապի ձևավորմանը նպաստող» փաստաթուղթը, որը, սակայն, որևէ կարգավորում չի պարունակում. այն ընդամենը հետադարձ կապի հնարավոր ուղղությունների ընդհանուր նկարագրություն է:

Ըստ ինքնավերլուծության՝ ռեկտորը, ուսումնական գծով պրոռեկտորը, դեկանները շաբաթվա ընթացքում ունեն ընդունելության համար նախատեսված ժամեր, ՀԲԻ-ի ինտերնետային կայքում առկա է «Հետադարձ կապ» պատուհանը:

Այդուհանդերձ, չկան հետադարձ կապի ապահովման և խթանման մեխանիզմներ:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀԲԻ-ում կազմակերպվում են դասախոսություններ՝ նեղ մասնագիտական բնագավառի լավագույն մասնագետների մասնակցությամբ, վերապատրաստվելով ՈԱԱԿ-ում՝ ՈԱԿ աշխատակիցները բուհում կազմակերպել են ՈԱԿ անձնակազմի և դասախոսական կազմի համար լրացուցիչ դասընթացներ, նախատեսվում է կազմակերպել լեզվի լրացուցիչ պարապմունքներ: Նշված գործողությունները, սակայն, թիրախավորում են միայն ներքին շահակիցներին:

ՀԲԻ ինտերնետային կայքում առկա են որոշ գիտաուսումնական բաց նյութեր, ինչպես նաև հրապարակումներ ամսագրերում:

ՈՒԽ ներկայացուցիչները երբեմն այցելում են դպրոցներ՝ ներկայացնելով ՀԲԻ գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

Դատողություններ. Չնայած ներքին հաշվետվողական որոշ մեխանիզմների առկայությանը՝ դրանք դեռևս չեն վերածվում արտաքին հաշվետվողականության: Հաստատված փաստաթղթերը որևէ հստակ կարգավորում չեն առաջացնում, ինչի արդյունքում ՀԲԻ-ում չկա հաշվետվողականության որևէ երաշխիք (բացառությամբ օրենսդրությամբ պահանջվողների) կամ կարգ:

ՀԲԻ գործունեությունը թափանցիկ դարձնող հիմնական գործիքի՝ ինտերնետային կայքի թարմացման ցածր հաճախականությունը, SS պատասխանատուին ոչ միայն տեխնիկական, այլև բովանդակության առումով հանձնարարված լինելը վկայում են այն մասին, որ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության ապահովման քաղաքականություն ՀԲԻ-ում դեռևս ձևավորված չէ, թեև ներդրված մեխանիզմները

հնարավորություն տալիս են ապահովել թափանցիկությունն ու հասարակությանը հասանելիությունը:

Հետադարձ կապի հնարավորություններ ՀԲԻ-ում ստեղծված են թե ներքին, թե արտաքին շահակիցների համար, սակայն դրանք ընդամենը հնարավորություններ են և միտված չեն հետադարձ կապի ապահովմանը: ՀԲԻ-ն չի նախաձեռնում հետադարձ կապ:

ՀԲԻ-ն իր կայքի միջոցով հասանելի է դարձնում հասարակության համար որոշ գիտաուսումնական նյութեր, սակայն հասարակությանը գիտելիքի փոխանցումը երաշխավորող մեխանիզմներ չկան: Կարելի է եզրակացնել, որ հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցումը լիովին թողնված է արտաքին շահակիցների նախաձեռնությանը: Թերևս միակ բացառությունը ՈւԽ այցերն են դպրոցներ, որոնք, սակայն, դեռևս կայուն ձևավորված մեխանիզմ չեմ և առավելապես հետապնդում եմ դիմորդների գրավման նպատակ:

Եզրակացություն: Հաշվի առնելով արտաքին հաշվետվողական կարգի, ինչպես նաև գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության ապահովման քաղաքականության բացակայությունը, հետադարձ կապի ապահովման և հասարակությանը գիտելիքի փոխանցման հարցերում նախաձեռնողականության պակասը՝ կարելի է եզրակացնել, որ իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և ռեսուրսների օգտագործման համար հասարակությանը հաշվետվողականության կայուն մեխանիզմներ ՀԲԻ-ն դեռևս չի ձևավորել:

Եզրահանգում: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀԲԻ-ն հիմնադրման օրվանից կողմնորոշված է եղել միայն դեպի տեղական շուկան, սակայն վերջին տարիներին, հաշվի առնելով ֆինանսական հնարավոր օգուտները, սկսել է դիտարկել օտարերկրյա ուսանողների ուսուցման հնարավորություններ:

Միջազգայնացմանը վերաբերող դրույթներ սահմանված են ՌԾ-ում: Մասնավորապես՝ ՀԲԻ-ն նպատակադրել է ընդլայնել համագործակցությունը Հայաստանի և արտասահմանյան բուհերի հետ, նպաստել ուսանողների և դասախոսների միջբուհական ակադեմիական տեղաշարժին, ապահովել արտերկրի փորձառու մասնագետների մասնակցությունը կրթական, գիտական ծրագրերի մշակման և ներդրման գործում, պայմաններ ստեղծել բուհում արտասահմանցի ուսանողների ընդունելության և կրթական գործընթացի համար, նպաստելով ՀԲԻ–ի դասախոսների օտար լեզուների իմացությանը, ինչպես նաև հրավիրելով նոր դասախոսներ:
Առկա է «ՀԲԻ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգ»:

Այդուհանդերձ, միջազգայնացմանը վերաբերող կարգավորումները չեն պարունակում խրախուսման քաղաքականության որևէ տարր կամ ընթացակարգ: ՀԲԻ-ն առավելապես կարևորում է տեղական կազմակերպությունների (հատկապես՝ կլինիկական) հետ կապերը:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Ըստ ինքնավերլուծության՝ մինչ այժմ ՀԲԻ–ում չկա արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվացք:

Գիտական գործընթացի կանոնակարգումը որոշվել է հանձնարարել գիտական գծով պրոռեկտորին, սակայն վերջինիս պաշտոնը թափուր է:

Արտասահմանցի ուսանողների հավաքագրումը պատվիրակված է մասնագիտացած կազմակերպության:

Ըստ ինքնավերլուծության՝ օտարերկրյա ուսանողների առկայությունը կստեղծի հատուկ ստորաբաժանման կամ պատասխանատուի հաստիքի ստեղծման անհրաժեշտություն:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Արտաքին համագործակցությունն առաջին հերթին իրականացվում է կլինիկական ուսուցման կազմակերպման շրջանակում. ՀԲԻ-ն համագործակցում է մի շարք տեղական հաստատությունների հետ: Վերջիններիս հետ համագործակցությունը երկարամյա է և փոխշահավետ, քանի որ կլինիկական դասավանդողներն ստանում են համապատասխան վարձատրություն և վարկանիշային միավորներ:

Առկա են օտարերկրյա բուհերի հետ ստորագրված փոքրաթիվ հուշագրեր, որոնք, սակայն, չեն գործարկվում:

2019-2020 թթ. սկսած ՀԲԻ-ն ունենալու է օտարերկրյա ուսանողներ: Բացի հավաքագրվածներից՝ կան նաև այլ տեղական բուհից տեղափոխված օտարերկրյա ուսանողներ:

ՀԲԻ-ն պլանավորել է ունենալ հանրակացարան:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Օտար լեզուների դասավանդումն ընգրկված է բոլոր կրթական ծրագրերում: Սակայն, ըստ ինքնավերլուծության, օտար լեզուների ուսուցմանը հատկացված ժամաքանակը բավարար չէ լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովման համար:

Օտար լեզուներին տիրապետող աշխատակիցների թիվը վերջին տարիներին գրեթե անփոփոխ է:

Այդուհանդերձ, ըստ ինքնավերլուծության, դասախոսական անձնակազմը առաջատար արտասահմանյան համալսարաններում և կլինիկաներում պարբերաբար մասնակցում է կոնգրեսների, կոնֆերանսների, սեմինարների:

Դատողություններ. ՀԲԻ-ն ներկայումս առաջին քայլերն է անում միջազգայնացման ուղղությամբ: Միջազգայնացման քաղաքականությունը դեռևս մշակման փուլում է: ՀԲԻ-ն, սակայն, իր զարգացման վերջին տարիներին առավելապես կարևորել է հարաբերությունները տեղական կազմակերպությունների հետ, ինչը սահմանափակ ռեսուրսների պայմաններում համարել է առավել առաջնահերթ:

Որպես միջազգայնացման օգուտներ՝ դեռևս դիտարկվում են միայն ֆինանսական ուղղակի մուտքերը, ինչը վտանգում է միջազգայնացման՝ առավել հեռանկարային և նաև անուղղակի օգուտներ ենթադրող ուղղությունների գործարկումը:

Արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման գործառույթ իրականացնող ստորաբաժանումներ ՀԲԻ-ում առկա չեն, ինչը նշանակում է, որ արտաքին կապերով հիմնականում զբաղվում է ռեկտորը, ինչպես նաև ընթանում են ապակենտրոնացված չկանոնակարգվող գործընթացներ: Առկա միջազգային կապերի փոքր մասշտաբի պայմաններում նման մոտեցումը կարող է արդարացված թվալ՝ հաշվի առնելով համապատասխան ենթակառուցվածքի ստեղծման և պահպանման ծախսերը, սակայն այն խիստ սահմանափակում է արտաքին կապերի ընդլայնման հնարավորությունները: ՀԲԻ-ն չունի միջազգայնացման ուղղությամբ զգալի ներդրումներ կատարելու պատրաստականություն, քանի դեռ չեն ստացվել որոշակի օգուտներ: Հետևաբար՝ միջազգայնացման կարևորությունն ու օգուտները դեռևս չեն գնահատվել և գիտակցվել ՀԲԻ կողմից:

Տեղական բուժհաստատությունների հետ փախշահավետ և երկարամյա կապերը թույլ են տալիս եզրակացնել, որ դրանք վտանգված չեն: Տեղական կազմակերպությունների հետ համագործակցության առումով ՀԲԻ-ն հաջողվել է ձևավորել կայուն ցանց:

Այլ բուհից տեղափոխման ցանկություն հայտնած ուսանողներին ընդունելը վկայում է այն մասին, որ ՀԲԻ-ն օգտագործում է ընձեռնված հնարավորությունները, սակայն դեռևս նպատակադրված չէ դրանց ստեղծմանը մեծածավալ ջանքեր ուղղել: Ապագա հանրակացարանը, սակայն, կընդլայնի միջազգայնացման հնարավորությունները և առավել գրավիչ կդարձնի ՀԲԻ-ն օտարերկրյա դիմորդների համար:

Ցավոք, ՀԲԻ-ն դեռևս հետևողական չէ իր կնքած հուշագրերի իրացմանը, ինչը որոշակի ձևական բնույթ է հաղորդում միջազգային կապերի մի մասին:

Չնայած դասախոսական կազմի որոշակի մասնակցությանը միջազգային տարաբնույթ միջոցառումներին՝ նրանց օտար լեզվի իմացությունը ՀԲԻ կողմից չէ ապահովվել: Օտար լեզվի իմացությունը բնութագրող տվյալների անփոփոխ ոչ բավարար մակարդակը վկայում է, որ ՀԲԻ-ն պատշաճ ջանքեր չի գործադրում այս ուղղությամբ:

Եզրակացություն: Հաշվի առնելով ՀԲԻ-ի սերտ և կայուն համագործակցությունը տեղական կլինիկական կազմակերպությունների հետ, միջազգայնացման ուղղությամբ առաջին քայլերը և նպատակները, ռեսուրսների աստիճանական համապատասխանեցումը օտարերկրյա ուսանողների կարիքներին՝ կարելի է եզրակացնել, որ արտաքին կապերի միջոցով ՀԲԻ-ն ապահովում է փորձի որոշակի փոխանակում և զարգացում:

Եզրահանգում: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է բավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀԲԻ ներկայիս ՈԱ ներքին համակարգի ձևավորումն սկսվել է 2011 թ.-ից, երբ ստեղծվել է որակի ապահովման ենթակառուցվածքը և սկսվել են անցկացվել հարցումներ:

Ներկայումս ՀԲԻ-ում հաստատված են «ՈԱ աշխատանքային ուղեցույց », «ՈԱ ձեռնարկ», «Կրթության որակի ապահովման քաղաքականություն » փաստաթղթերը: Առկա են նաև տարբեր հարցումների ընթացակարգեր: Վերոնշյալ փաստաթղթերում, սակայն, առկա են կարգավորումների կրկնություններ:

Բացի հարցումներից՝ տարբեր գործընթացների արդյունավետությունը ՀԲԻ-ում փորձում են գնահատել ընթացիկ արձագանքների և կատարողականների միջոցով, ինչպես նաև սկսվել են կիրառվել վիճակագրական մեթոդներ:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2011 թ.-ին ստեղծվել է ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության աշխատանքային խումբ, որի հիման վրա 2013 թ.-ին ստեղծվել է կրթության որակի ապահովման կենտրոնը՝ մշտական հաստիքներով: Ներկայումս կենտրոնն ունի 3 հաստիք, ինչպես նաև առանձին աշխատասենյակ, որն ապահովված է անհրաժեշտ սարքավորումներով:

Կենտրոնի խնդիրներն ու գործառույթները սահմանված են կենտրոնի կանոնադրությամբ:

ՀԲԻ-ում նաև ձևավորվել է ԳԽ ՈԱ հանձնաժողով, ՈԱ ֆակուլտետային հանձնաժողովներ, նշանակվել են ամբիոնների ՈԱ պատասխանատուներ: Նրանց մի մասի գործառույթները սահմանված են ՈԱ ձեռնարկով:

Ինստիտուտի 7 աշխատակիցներ 2016-2019 թթ. մասնակցել են «Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ դասընթացներին:

ՈԱԿ-ը ենթարկվում է ՀԲԻ ռեկտորին:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Բացի հարցումներին որպես ռեսպոնդենտ մասնակցելուց՝ ներքին շահակիցները ներգրավված են եղել ինքնավերլուծության աշխատանքային խմբերում, ՈԱ հանձնաժողովում:

ՈԱԿ-ի աշխատանքներին աջակցում են մի խումբ ուսանողներ:

Այդուհանդերձ, փորձագիտական այցի ընթացքում նշվեց, որ ՈԱԿ համար առկա է «ներքնից» հաշվետվողականության պակաս, ինչպես նաև պարզ դարձավ, որ ռեկտորի և ՈԱԿ-ի հաղորդակցումը հազվադեպ է:

ՈԱԿ-ը դասախոսական կազմի մասնակցությամբ կազմակերպել է դասավանդման նոր մեթոդների տարածման միջոցառումներ: Նոր մեթոդները, ըստ ՈԱԿ ներկայացուցիչների, ներդրվել են հատկապես երիտասարդ դասավանդողների կողմից:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հաստատված է «Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթուղթը, որը, սակայն, պարունակում է միայն ընդհանուր ձևակերպումներ և չի հստակեցնում վերանայման ՀԲԻ-ի քաղաքականությունն ու ընթացակարգը, ինչպես նաև չի պարզաբանում ՈԱ ներքին համակարգի արդյունավետության գնահատման մոտեցումները:

Այդուհանդերձ, ըստ ինքնավերլուծության՝ ՀԲԻ-ում ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության արդյունքների հիման վրա կազմվել է բարելավման գործողությունների ծրագիր:

10.5 Որակի ապահովման ներքին հաակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ՈԱ ներքին համակարգը մեծապես հիմնված է որակի ապահովման եվրոպական ստանդարտների տերմինաբանության վրա, իսկ ինքնավերլուծությունը հիմնականում իրականացվել է ՈԱԱԿ ձևաչափով:

ՈԱ ներքին համակարգը միայն մասամբ է ապահովել ինքնավերլուծության տեղեկատվական հիմքերը:

Գործունեության ընթացիկ գնահատման նպատակով քանակական ցուցիչների կիրառում ՀԲԻ-ում նախատեսված չէ:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ՀԲԻ-ում առկա են ներքին շահակիցների առանձին խմբերի համար գործընթացների որակի վերաբերյալ տեղեկությունները հասանելի դարձնող մեխանիզմներ, մասնավորապես՝ ԳԽ ներկայացվող հաշվետվություններ, պարբերաբար անցկացվող հանդիպումներ ուսանողների և ՊԴ կազմի հետ:

Արտաքին շահակիցների համար տեղեկությունների թափանցիկության ապահովման գործիք է դիտարկվում ինտերնետային կայքը, սակայն գործընթացների որակի մասին տեղեկություններ չեն հրապարակվում:

Դատողություններ. ՈԱ քաղաքականությունն ու ընթացակարգերն արտացոլող փաստաթղթեր ՀԲԻ-ում առկա են, սակայն դրանք համակարգված չեն, ինչը դժվարացնում է այդ փաստաթղթերում տեղ գտած կարգավորումների գործնական ներդրումը: ՈԱ գործընթացները նկարագրված են, սակայն նույն չհամակարգվածության պատճառով հստակ չեն այդ գործընթացների տեղի ունենալու երաշխիքները:

ՀԲԻ-ում փորձում են գործընթացների արդյունավետությունը գնահատել տարբեր մոտեցումներով, սակայն դրանց մի մասը վերլուծական բնույթ չունի և գնահատում է միայն գործողությունների կատարված լինելը: Այդուհանդերձ, աստիճանաբար ներդրվում է վիճակագրական մեթոդներով վերլուծություններ կատարելու պրակտիկան, ինչը պատշաճ զարգացման դեպքում կապահովի ավելի արդյունավետ գնահատում:

Չնայած ՈԱ հանձնաժողովների և պատասխանատուների առկայությանը՝ որակի ապահովման գործառույթների հիմնական մասն իրականացվում է ՈԱԿ-ի կողմից: Կենտրոնի կարողությունների զարգացման համար միջոցների տրամադրումը վկայում է այն մասին, որ ՀԲԻ-ն կարևորում է ՈԱ ենթակառուցվածքի գործունեությունը: Թեև ՈԱԿ կարողությունները բավարար են ՈԱ ներկայիս գործընթացների համար, հաշվի առնելով ՈԱ ներքին համակարգի մոտեցումների փոփոխությունները՝ մոտ ապագայում կարող է առաջանալ նոր ուղղություններով վերազինման և վերապատրաստման կարիք:

Բացի ռեսուրսներից՝ ՈԱԿ-ին նաև տրամադրված է զգալի ինքնավարություն. այն գործում է ռեկտորի ենթակայության տակ:

Այդուհանդերձ, ռեկտորի հետ թույլ կապը վտանգում է ՈԱԿ ինքնավարության օգուտները:

Բացի այդ՝ հաշվի առնելով թե որոշակի կտրվածությունը /մեկուսացումը/ ռեկտորից, թե ստորաբաժանումներից հաշվետվողականության պակասը՝ կարելի է եզրակացնել, որ ՈԱԿ-ը դեռևս լիարժեքորեն չի ներգրավված ներքին տեղեկատվական հոսքերում:

Ներքին շահակիցների առանձին խմբերի ներգրավվածությունը ՈԱ աշխատանքներում վկայում է, որ որակի ապահովումը կարևորվում է նրանց կողմից: Այդուհանդերձ, դեռևս չկան արտաքին շահակիցների ներգրավման մեխանիզմներ:

Հատկանշական է, որ ներքին շահակիցների մի մասը տարբեր ձևաչափերով մասնակցում է ՈԱ գործընթացներին, սակայն միևնույն ժամանակ ՀԲԻ դասախոսական կազմում զգալի է տարիների փորձ ունեցող բժիշկների բաժինը, ովքեր, ինչպես ցույց է տալիս ՈԱԿ փորձը, չունեն ՈԱ գործընթացներին մասնակցելու մեծ հակվածություն:

ՈԱ ներքին համակարգի արդյունավետության գնահատման և դրա հիման վրա բարելավման կայուն մեխանիզմներ ՀԲԻ-ում ներդրված չեն:

Թեև ինքնավերլուծությունն իրականացվել է համապատասխան ձևաչափով, ՈԱ ներքին համակարգի գործունեությունը միայն մասամբ է օգտակար եղել ինքնավերլուծության համար: ՈԱ վերաբերյալ հաշվետվություններն ու տեղեկությունները թույլ չեն տալիս լիարժեք գնահատում իրականացնել՝ առանց տեղեկությունների լրացուցիչ հավաքագրման:

Թեև ՀԲԻ-ն ունի առանձին շահակիցներին գործընթացների որակի մասին տեղեկությունների առաքման մեխանիզմներ, դրանք չեն ապահովում այդ տեղեկությունների թափանցիկությունը: Տեղեկություններ փնտրողի համար դրանք միանգամից հասանելի չեն, իսկ հրապարակվող տեղեկությունները միայն գործընթացների մասին են, բայց ոչ դրանց որակի:

Եզրակացություն: Հաշվի առնելով ՀԲԻ-ում ընթացող ՈԱ գործընթացների քանակական և որակական աճը, որակի ապահովման կենտրոնի գործունեության կայունությունը, ներքին որոշ շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում՝ կարելի է եզրակացնել, որ ՀԲԻ ՈԱ ներքին համակարգն ընդհանուր առմամբ նպաստում է գործընթացների շարունակական բարելավմանը և փորձում է նպաստել որակի մշակույթի ձևավորմանը:

Եզրահանգում: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է բավարար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելությունը և նպատակները	Բավարարում է
2. Կառավարումն ու վարչարարությունը	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրերը	Չի բավարարում
4. Ուսանողները	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	Բավարարում է
6. Հետազոտությունը և զարգացումը	Չի բավարարում
7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվությունը	Չի բավարարում
9. Արտաքին կապերը և միջազգայնացումը	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգը	Բավարարում է

Ամսաթիվ՝ 09 մարտի, 2020

_____

Տիգրան Մնացականյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Տիգրան Մնացականյան՝ 2008 թ.-ին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ)՝ «Կառավարում» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան՝ «Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունները (ՀՀ օրինակով)» թեմայով: 2011 թ.-ից ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ է: 2008-2011 թթ.-ին հանդիսացել է ՀՊՏՀ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ: 2009 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ-ի կառավարման ամբիոնի դասախոս/ասիստենտ: Հրատարակել է մի շարք գիտական հոդվածներ կառավարման տեսության, հանրային կառավարման պատմության, հանրային կառավարման ժամանակակից հիմնախնդիրների և արդյունավետության գնահատման մեթոդաբանության ու բարձրացման, տեղական ինքնակառավարման հիմնախնդիրների վերաբերյալ: Մասնակցել է բարձրագույն կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված միջազգային գիտաժողովների:

Աննա Փոլադյան՝ 1994 թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժինը: 1994-96 թթ. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժնում եղել է փորձնակ-հետազոտող, նույն թվականին եղել է ավագ լաբորանտ: Այնուհետև 1996–1998 թթ. եղել է կրտսեր գիտաշխատող, 2000 թթ.-ին՝ գիտաշխատող, հետագայում նաև 2000-2018 թթ. ավագ գիտաշխատող: 2000 թ.-ից կենսաբանական գիտությունների թեկնածու է: 2016-2017 թթ. ԵՊՀ Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնում անհատ խորհրդատու: 2012-ից առ այսօր Երևանի պետական համալսարանում Կենսաբանության ֆակուլտետ, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում դոցենտ: Մասնակցել է փոխանակման ծրագրերի և մի շարք գիտաժողովների: Հեղինակ է մոտ 22 հրատարակված գիտական հոդվածների, գրքերի և ուսումնական ձեռնարկների: Մասնակցել է մոտ 12 դրամաշնորհների: Պարգևատրվել է մի շարք պարգևներով:

Արտեմ Գրիգորյան՝ 1997-2003 թթ. սովորել է Երևանի պետական բժշկական համալսարանում բժշկականխարգելման ֆակուլտետում: 2014-ից առ այսօր ԵՊԲՀ ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի դոցենտ: 2019 թ.-ից առ այսօր աշխատում է որպես ԵՊԲՀ ընդհանուր բժշկության ֆակուլտետի փոխդեկան:

Պոլին Գրիս՝ 2005 թ.-ին ավարտել է Հայդելբերգի համալսարանը: 2014-ին ստացել գիտությունների թեկնածուի աստիճան: 2012 թ.-ից Հայդելբերգի համալսարանի Հանրային

առողջության ինստիտի ուսումնական մասի համակարգողն է և Որակի ապահովման կառույցի պատասխանատուն: Մի շարք մասնագիտական ասոցիացիաների անդամ է: Արժանացել է բազմաթիվ մրցանակների և պարգևների:

Վաչե Ղարիբյան՝ Հայ-ռուսական համալսարան, Ընդհանուր և դեղագործական քիմիայի ամբիոնի 4-րդ կուրսի ուսանող է: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողնության ձայն» նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

16.12 - 18.12.2019թ.

	16.12.2019 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ՀԲԻ ռեկտորի և հիմնադիրների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ	11:40	12:25	45 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:35	13:35	60 րոպե
5.	Հանդիպում դեկանների հետ	13:45	14:25	40 րոպե
6.	Հանդիպում ՀԲԻ շրջանավարտների ներկայացուցիչների հետ	14:35	15:35	60 րոպե
7.	Հանդիպում ՀԲԻ գործատուների ներկայացուցիչների հետ	15:45	16:45	60 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	16:55	18:50	115 րոպե
	17.12.2019 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ, այդ թվում կլինիկական	09:30	10:30	60 րոպե
2.	Դասալսում	10:40	11:20	40 րոպե
3.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:30	12:30	60 րոպե

4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5.	Հանդիպում Ուսանողական խորհրդի, ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ	13:50	14:20	30 րոպե
6.	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (10-15 հոգի)	14:30	15:30	60 րոպե
7.	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, մարզասրահ, բուժկետ, բուֆետ)	15:40	16:40	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	19:30	160 րոպե
	18.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի հետ	9:30	10:20	50 րոպե
2.	Այց դեկանատներ և ամբիոններ /փաստաթղթերի ուսումնասիրություն/	10:30	11:30	60 րոպե
3.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	11:40	12:20	40 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:30	13:30	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:50	17:50	180 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ՀԲԻ ղեկավար կազմի հետ	18:00	18:30	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	2018-2019 գիտական խորհրդի նիստերի արձանագրություններ	2
2.	Որևէ ամբիոնի լրացված աշխատանքային պլանի օրինակ	2
3.	Ֆակուլտետային խորհրդի որոշումներ արձանագրություններ	2
5.	Ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլաններ, հաշվետվություններ	2
7.	«Հայաստանի բժշկական ինստիտուտի հրապարակային տեղեկատվության տարածման կարգի»հիմնավորում (գիտական խորհրդի 27.08.2019թ. նիստի արձանագրություն)	2
8.	Բենչմարքինգի արդյունքների հաշվետվություն (օրինակ)	3
9.	Բուժական ֆակուլտետի մի քանի առարկայի օրինակելի ծրագիր	3
10.	Պորտֆոլիո (օրինակ)	3
11.	Ռեֆերատի (օրինակներ)	3
12.	ՄԿԾ-ների վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքներ	3
13.	ՄԿԾ-ների վերաբերյալ շրջանավարտների հարցման արդյունքներ	3
14.	ՄԿԾ-ների վերանայման օրինակներ և հիմքեր	3
15.	Երևանի և մարզերի, ինչպես նաև Վրաստանի հայաբնակ շրջանների ավագ դպրոցներում հանդիպումների հիմքեր	4
16.	Ուսումնառողներին՝ վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման կանոնակարգ	4
17.	Հարցումների արդյունքում մշակված միջոցառումների պլան	4
18.	Համատեղողների ցուցակը իրենց հիմնական աշխատավայրերով	5
19.	Երիտասարդ դասախոսների ցանկ	5
20.	Դասալսման լրացված թերթիկներ	5
22.	ՊԴ կազմի միջազային և տեղական գիտական և ուսումնամեթոդական սեմինարներին և կոնֆերանսներին ստացած սերտիֆիկատներ	5
24.	Ուսումնական տարվա ընթացքում ինստիտուտի աշխատակիցները ստանում են պարգևատրումներ, օգնություններ (հրամաններ)	5

25.	Լավագույն դասախոսները խրախուսվում են պատվոգրերով և դրամական պարգևներով (օրինակ, հրաման)	5
26.	Ինստիտուտի գիտական և հրատարակչական գործունեության տվյալ օրացուցային տարվա պլանը	6
28.	ՀԲԻ-ի հիմնադրման օրվանից հրատարակվել են մենագրություններ, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ (օրինակներ)	6
29.	«Էրեբունի» ամսաթերթ (օրինակ)	8
31.	ՈԱԿ-ի տարեկան հաշվետվություն, գործողությունների պլան	10
33.	միջազգային կազմակերպությունների ցանկ, որոնց հետ համագործակցում եք	9
34.	Միջազգային ուսանողների անձնական գործեր	9
35.	Հարցաթերթի օրինակ /ուսանող, դասախոս/	4
36.	ինստիտուտի մասին տեղեկատվության տարածման միիջոցներ/ֆլայեր, բուկլետ/	8
37.	ֆինանսական հաշվետվություն/տարեկան/	7
38.	Ուսանողի հետազոտական աշխատանքի օրինակ/հոդված, հետազոտություն/	6
39.	Կադրերի ռեզերվ	5
40.	Հաստիքացուցակ	5
42.	Բացակայությունների մատյաններ/վերլուծություններ	2
44.	Ստացված նամակների հարց ու պատասխան/2019/	8
45.	Պրակտիկաի օրագիր	3
46.	Պրակտիկաի ծրագիր	3
47.	Ուսանողների հարցումների հարցաթերթի օրինակ	10
48.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություն 2017 թ.	2
49.	ՀԲԻ գիտական հետազոտությունների ռազմավարություն	6
50.	Ուսումնական պլան 2012-2019	3
51.	ՀԲԻ շրջանավարտների միության կանոնադրություն	4
52.	Ուխ նիստերի արձանագրություններ	4
53.	Ուսանողների ցանկ	4

54.	Շրջանավարտների ցանկ	4
55.	Աշխատանքային ծրագիր անգլերեն լեզու և բժշկական տերմինաբանություն	3
56.	Տեղափոխություններին առնչվող փաստաթղթեր	2

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Կլինիկական բազաներ
2. Լսարաններ, ուսումնական սենյակներ, փորձարարական սենյակներ, կաբինետներ
3. Համակարգչային լսարան / Էլեկտրոնային գրադարան
4. Գրադարան
5. Ամբիոններ
6. Դեկանատներ
7. Ստորաբաժանումներ
8. Դահլիճ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ- Հայաստանի հանրապետություն
2. ՀԲԻ- Հայկական բժշկական ինստիտուտ
3. ՄԿԾ-մասնագիտության կրթական ծրագիր
4. ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն
5. ՈԱ-Որակի ապահովում
6. ՈԱԱԿ- «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն » հիմնադրամ
7. ՊԴԿ-պրոֆեսորադասախոսական կազմ
8. ՌԾ- Ռազմավարական ծրագիր
9. ՌՊ-Ռազմավարական պլան
10. ՈՒԽ-Ուսանողական խորհուրդ